

ԵՆԵՔԱՆԷ

9-10

(204-205)
սեպտեմբեր-հոկտեմբեր, 2023

Սուրբ Նշան կամ «Սև ժամ» եկեղեցու հիմնարկեքի և կառուցման տարեթվերը տարբեր աղբյուրներում իրար չեն համապատասխանում: «Մեղու Հայաստան» լրագիրն առանձնահատուկ հաղորդումով անդրադարձել է Սբ. Նշան եկեղեցու հիմնարկեքի արարողությանը. «Փառաւորապէս զհանդէս օրհնութեան հիմնարկութեան նորոգ կառուցանելի եկեղեցւոյն Հայոց բնիկ ժողովրդականաց Ալեքսանդրոպօլոյ»: «Տփխիսաբնակ Պայծառափայլ Կնեազ Ղահրաման Երկայնաբազուկ Արղութեան»-ը 1858 թ. կտակ է թողնում Գյումրիում եկեղեցի կառուցելու նպատակով. «Եւ այդ առաքինական խորհուրդը իրագործելու համար 1858 թուին նուիրէ 5800 մանեթ արծաթ քաղաքիս մէջ մէկ եկեղեցի կառուցանելու նպատակաւ»:

1859 թ. մայիսի 24-ին տեղի ունեցած եկեղեցու հիմնարկեքին ներկա էին «մեծամեծ և երևելի» աստիճանավորներ, «մեծարու իշխաններ», կրոնական ու դավանական փոքրամասնությունների ներկայացուցիչներ, «աշխատասեր արհեստավորք» իրենց համաքարական դրոշակներով, և «բովանդակ բնակիչք քաղաքի մերոյ»: Առաջնորդական փոխանորդը դիմում է «տեղւոյս բարեպաշտօն հայազգի ժողովրդոց» եկեղեցու կառուցման համար նվիրատվություն անելու կոչով, ապա հատուկ շնորհակալություն հայտնում եկեղեցու հիմնափորության աշխատանքներին ջերմեռանդությամբ մասնակցած արհեստավորներին: Լրագիրը հայտնում է նաև, որ միջոցառման պաշտոնական մասի ավարտից հետո, ինչպես վայել է պաշտամունքային կառույցի սրբազան արարողությանը, երեք վրաններում «վայելուչ նախաճաշիկք» է տրվում:

Եկեղեցու հյուսիսային դռան վերևում մարմարյա սալի արձանագրությունը հավաստում է. «Առատաբաշխ տրօք պայծառափայլ կնեազ Ղահրամանի Երկայնաբազուկ Արղութեան և ջերմեռանդ հասարակութեան Հայոց քաղաքիս կառուցավ Սուրբ Աստուածածին եկեղեցիս սկսեալ ի 1859 ամի Փրկչական և ավարտեալ ի 1864 ամի»: Ինչպես փաստում է նշված վիճագրությունն ու հարավային ճակատին տեղադրված «Չարչարանաց Աստվածածին» Տիրամոր հարթաքանդակը, որ եկեղեցին կառուցվել է Սուրբ Աստվածածնի անունով նպատակ ունենալով Գյումրի բերված Աստվածամոր «Յոթ վերք» սրբապատկերը տեղափոխել նորակերտ եկեղեցի: Իրոք, որոշ ժամանակով, «Յոթ վերք»-ի պատկերը պահվել է այս եկեղեցում՝ որպես քաղաքի միակ

քարաշեն ու բարեկարգ հայկական եկեղեցի:

Մատենադարանում «Ձանազան հեղինակների արխիվ» կոչված արխիվային ֆոնդում, ինչպես նշում է Ավետիք Աղանյանը, պահպանվել է Ալեքսանդրապոլ քաղաքի հայկական եկեղեցիների վերաբերյալ ձեռագիր մի գրվածք, որը Շիրակի թեմի առաջին առաջնորդ Արտակ Եպիսկոպոս Սմբատյանի գրվածքն է Ալեքսանդրապոլի չորս եկեղեցիների հիմնադրման, դրանց կառուցման և ավարտման պատմության մասին: Արտակ Սմբատյանի ձեռագիր գրվածքում նշված է, որ Սբ Նշան «եկեղեցու հիմքը ձգված է 1858 թվին և վերջացել է (1864 թ.-Ա.Մ.-Ս.) շենքը 1870 թվին և օծվել Աբել Եպիսկոպոսի ձեռքով: Եկեղեցին շինել է Իշխան Ղահրաման Դավթյան Երկայնաբազուկ Արղությանի նվիրած 2000 ռուբլի գումարով: Վերակացուներ եղել են դյուզբյանդցի տեր Անդրոն և Սևոտի: Զանաթաւան. օւխաժող



վարպետ եղել է Աղապապ Վահրայանը: Իշխանը նորից տալիս է 2200 ռուբլի»:

Հետագայում, երբ կառուցվել է Երկայնա «Սուրբ Աստվածածին» եկեղեցին, Տիրամոր Յոթ Վիրաց սրբանկարը տեղափոխվել է այդ նորակառույց եկեղեցին: Իսկ Երկայնաբազուկի կտակած ու ժողովրդի հանգանակած գումարով կառուցված եկեղեցին 1870 թվին Աբել Եպիսկոպոսի ձեռքով վերաօծվել է «Սուրբ Նշան» անունով: Փաստորեն, երբ Երկայնաբազուկի «երկար ձեռքը չի հասնում» երանելի սրբապատկերին, 1870 թ. «Չարչարանաց Աստվածածին» Տիրամոր պատկերի կրկնօրինակը գետեղվում է «Սուրբ Նշան» եկեղեցու հարավային պատին՝ որմնաքանդակի տեսքով: Իմիջիայլոց, ինչքան էլ տարակարծություններ կան բարեպաշտ իշխան Արղությանցի և նրա կատարած մեծագործու-

ԳՅՈՒՄՐՈՒ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

յունների մասին, տեղին է ներկայացնել «Մեղու Հայաստանի» լրագրից մի հատված. «Արղութեանց ազգի Աստուածա Հաճոյ գործքերը ով որ ազգասէր անձն կայ՝ կարողայ պատմութիւնը ևս առաւել սրբազան Սարգիս Արքեպիսկոպոսի Ջալալեանց երկու հատոր «Ճանապարհորդութիւն ի Հայաստան» անուանեալ գրքերը, ուր կը տեսնեն նոցա մեծագործութիւնը, և Ղահրամանն Արղութեանց լինելով հարազատ սերունդ Ջաքարիայ Սպասալարին, իւր նախնեաց ճանապարհովն է ընթանում, որուն պատիւ, փառք և շնորհակալութիւն հրապարակական»:

Սբ Նշան եկեղեցին ունի վաղմիջնադարյան գմբեթավոր բազիլիկ տիպին բնորոշ հատակագծային ու ծավալատարածական պարզ ու դասական հորինվածք: Այն կառուցված է ճարտարապե-

տարաքանդակով: Այն 17-րդ դարի անհայտ հայ նկարիչ «Սևանի Աստվածածին» անունով հայտնի հրաշագործ սրբապատկերի ընդօրինակությունն է, որի պատրաստման 1870 թ.-ը փորագրված է պատկերի ստորին մասում:

Ճարտարապետական ավելի զուսպ ոճով է ձևավորված եկեղեցու ներքին հարդարանքը: Ավագ խորանի սրբատաշ որմնասյուներն ու աղոթասրահի կենտրոնում տեղադրված գմբեթակիր չորս հզոր մույթերն առանց սվաղի են, որի շնորհիվ սպիտակեցված պատերով ինտերիերում ավելի են շեշտվում դրանց մոնումենտալ ու տպավորիչ ծավալները: Ավագ խորանի բեմի վրա սեղանն է իր հավասարաթև խաչով, իսկ բեմի աջ ու ձախ կողմերում կան երկու խորաններ: Եկեղեցու պատուհանների ապակիներին էլ հարմարեցված են մետաքսե թափանցիկ կտորներ, որոնց վրա բատիկայի տեխնիկայով (մոմի կաթիլներով կամ հատուկ ներկերով մետաքսի, շիֆոնի գործվածքի կտորների վրա նկարագրողված պատկերներ) նկարված են ավետարանական տեսարաններ: Դրանք նույնպես վերցված են հայկական նկարագրող ձեռագրերից: Կապտաարծաթավուն լուսավոր գույներով նկարված պատկերները վիտրաժի տպավորություն են թողնում՝ ամբողջացնելով աղոթասրահի խաղաղ ու ոգեղեն միջավայրը: Ժամանակակից մեկնաբանություն ունեն եկեղեցու առաջաստները զարդարող չորս ավետարանիչների որմնանկարները: Կապտամոխրագույն ամպերի չընդհատվող շղթայով իրար միացած առաջաստներին տեղադրված ավետարանիչներն ու նրանց խորհրդապատկերները նկարված են դիմամիկ շարժման մեջ, ազգային ու անհատական դիմագծերով:

Կա հետաքրքիր պատմություն Սբ Նշան եկեղեցու մասին, երբ խորհրդային տարիներին եկեղեցին արհեստականորեն վերածել էին աստղադիտարանի, որի բացմանը ներկա է գտնվել նաև Վիկտոր Համբարձումյանը: Ասում են գնդաձև կայծակը խփում է գմբեթին, մտնում է եկեղեցի և զգալի ավերածություններ պատճառում այդտեղ տեղադրված աստղադիտակի սարքավորումներին: Կայծակի պատճառով թեքվում է նաև եկեղեցու խաչը. ժողովրդի մեկնաբանմամբ՝ դա աստվածամերժության տարիներին Աստծո զայրութիւն էր՝ «ի նշան Սբ Նշանի սրբապղծման»: Եկեղեցու գմբեթի խաչը հետագայում ուղղվում է և ստանում նախկին տեսքը: 1988 թ. երկրաշարժին Սբ Նշանի գմբեթն ու զանգագատունը խ-

նարկվեցին, և եկեղեցին վերականգնվեց Վարդան Դուկասյանի ընտանիքի ջանքերով:

Գյումրիի Սբ Աստվածածնի ավագ եկեղեցու կառուցման տարեթվի, ինչպես նաև նրա տեղում ավելի վաղ կանգնեցված եկեղեցու մասին ճշգրիտ տվյալները շատ սուղ են: Ցավոք, ոչ մի աղբյուրում նշված չէ, որ Գյումրիում նախքան 19-րդ դարը մատուռ-եկեղեցի է կառուցվել: Ներկայիս Սբ. Ավածածնի եկեղեցու տեղում Կամսարական իշխանների կառուցած փայտաշեն մատուռը եղել է նշանավոր ուխտատեղի և համարվում է 17-րդ դարի հուշարձան: Ի դեպ, տեղական բնական քարհանքներով հարուստ Շիրակ աշխարհում, այն էլ Կամսարական տոհմի կողմից, որ կրում էին «տեարք Շիրակայ և Արշարունեաց» տիտղոսը, անհավանական է, որ փայտաշեն եկեղեցի կառուցվեր: Պարզապես պատմագիտական աղբյուրներում բացակայում են տեղեկություններ, թե Կունայրի-Գյումրիում Կամսարական իշխանների կառուցած մատուռը 17-րդ դարից մինչև 19-րդ դարի կեսերն ինչ տեսք է ունեցել և ինչ վիճակով է պահպանվել:

Շատ կարևոր տեղեկությ է հայտնում Պ. վարդապետ Պետրոսյանն իր «Տեղագրութիւն Շիրակայ» աշխատության մեջ, որ այդ ժամանակ քաղաքում կար մոտ երկու հազար «տունք Հայոց. ընդարձակ եկեղեցի նորա, գոր կանգնեցին փայտակերտ ծածկութի՛ յանուն սուրբ Աստուածածնի, յորմէ փողոցաւ որոշի վայելուչ Առաջնորդարանն»: Շիրակի թեմի առաջնորդ Արտակ Եպիսկոպոս Սմբատյանի Ալեքսանդրապոլ քաղաքի հայկական եկեղեցիների վերաբերյալ ձեռագիր գրվածքում նույնպես հայտնվում է, որ. «Նոր գաղթած ժողովուրդը հիմնում է նաև Ս. Աստվածածին եկեղեցին հասարակ շենքով և փայտածածկ»: Հավանական է, որ Գյումրի-Ալեքսանդրապոլում պահպանված այդ եկեղեցու միայն ծածկն ու գմբեթի մի մասն է եղել փայտից: Այդ մատուռ-ուխտատեղիի կարևորությունն ավելի է մեծանում, երբ Գյումրիում բնակություն հաստատած գաղթականները 1830 թ. Բասենի Հասանկալա (Հասան-Ղալա) վանքից իրենց հետ բերել են «Եօթն Վիրաց Ս. Աստվածածին» հրաշագործ սրբապատկերը, որի հետևանքով էլ մատուռը վերածվել է նշանավոր սրբավայրի:

Ավետիք ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ
«Շիրակի պատմամշակութային հուշարձանները» գրքից

«ԶՅՈՒՆՈՑ ՃԱՍՓԱՆԵՐԻ» ԲԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ



Մեր օրեր... Մեր ժամանակներ: Ցավոք: Մինչև ե՞րբ դեռ մեր օրերի ցավի մասին: Ժամանակը ծնունդ է իրադարձություններ, և կամա թե ակամա ամեն ինչ դառնում է այս կամ այն ձևով նկարագրելի, նաև, փաստականից ու գեղարվեստականից գատ, մեկ ուրիշ համաձուլյ՜ այս անգամ արվեստագետի, դերասանի, ռեժիսորի տեսանկյունից: Մի կողմից՝ պատմական, բայց գոնե այսօր դեռ պատմություն չդարձած իրադարձությունների համապարփակ գեղարվեստական լուծում, մյուս կողմից՝ հայացք անցյալին՝ արմատներից վերադարձ կրկին մեր օրեր՝ նորից արվեստի ու արվեստագետի անշեղ կապի միջոցով:

Ի՞նչ է սա. առաջին հայացքից պատումների, հետաքրքիր խոսքի մի նոր ամբողջացում՝ մոդուլատի տեսքով: Բայց սա միայն առաջին հայացքից: Հեղինակը կենդանի շնչով առաջ է մղում հերոսների գործողությունները. չէ՞ որ ռեժիսորական ձեռքը նախևառաջ պետք է դա փաստեր: Բայց մի երևույթ ևս պետք է անպատճառ կարևորել՝ պատմվածքներում բոլոր իրադարձությունները նաև բեկվում են նրա՝ Սիրանույշ Դուկասյան «հոգեբանական»-հոգեբանի ներընկալումների դաշտում. ահա թե որտեղից են կերպարների հոգեբանական գնումները /առաջին հերթին իրական հենքով՝ «Շունը» պատմվածքում/, ապա՝ հայրենիքի բախտին բոլոր ժամանակներում բախտող արտագաղթ, պատերազմ, արմատկարմիրի երանգներ՝ ներքին պատճառ պատմական իրադարձություններով:

Սիրանույշ Դուկասյանի ժողովածուն ամփոփում է ընդամենը յոթ՝ ոչ ստվարածավալ գործեր, որոնք պատմապարտության, վավերագրության, մարդկային հոգեբանության ինքնատիպ գեղարվեստականացումներ են: Հեղինակին այստեղ պետք է որոնել ամենուր: Նա պարզապես բնավում է բոլորի ներսում՝ մտորումների, խոհերի, վերլուծությունների, ներքին խոսքի ընդհանրացումներում: Այդպես նաև կարելի է ներքին երկու պայմանական բաժանումներ անել՝ առաջին երկու գործերը որպես նվիրումներ, իսկ մյուսները՝ իբրև ընդհանրացումներ մի կողմից՝ մարդկային ճակատագրի, մյուս կողմից՝ լայն՝ հայի ճակատագրի առումով:

Վերահաս իրադարձությունների հենքին հեղինակը դիմում է մեծ աշխարհի վրձնի, գույների, դիմանկարի ու առիթնող քանդակ-գլուխգործոցների հեղինակի՝ համաբարձրացում ու արվեստագետի՝ Սուսաննա Սկրտչյանի միջոցով. թե՛նա, որին միայն այս գործում չէ անդրադարձը: Մեծ աշխարհի աղմուկն ու լռությունը՝ իրադարձությունների տեսքով, բերում են խորքային մտածումի՝ երևակայության հայացք մեծ եղեռնից մինչև մի ամբողջ մեծ դարաշրջանի 20-ական թվականներ՝ մերօրյա Արցախյան պատերազմ: Ցավոք, լռությունը կրկնվում է, բայց հեղինակը լավատես է, և աշխարհն արդեն ոչ կույր է, ոչ խուլ:

Մեկ ուրիշ ցավոտ հարց՝ հայկական արտագաղթ՝ «ապրելու», «լավ ապրելու», «ավելի լավ ապրելու» «միակ» նպատակով: Փոքրիկ թաղը մեծ քաղաքի կոլորիտային երանգներով ու կերպարներով, և, որ կարևորներից մեկն է, դիմելով շիրակյան քաղաքալուր, համահունչ ու ներդաշնակ խոսվածքին. ահա այդ նույն խոսվածքի և նուրբ հումորի միաձուլում է ապահովում պատմի կշռույթը. հեղինակին հաջողվում է ստանալ անհրաժեշտ «կտավ» /«Ես ինչ եղավ»/: Ցավի արտահայտումը ծիծաղի միջոցով, կամ, ինչպես ասում են, ծիծաղ արցունքների միջոց. «Մենք օր կապրիմք, գիտե՞ք ըդիկ ապրել է՞. ըշտը ամոթախեղդ կապրիմք», - ցավը թեթևացնում է հերոսներից մեկը: Թվում է սա իրականության հետ ոչ մի առնչություն չունեցող, պարզապես երևակայական-վերացական մի պատում է, սակայն իրականում սա հենց հայ իրականությունն է՝ գրողի և մեզանից յուրաքանչյուրի շրջապատում. չէ՞ որ սեփական հող ու ջրին ամենից ամուր կպածն անգամ, ցավոք, թողնում, հեռանում է: «Ես երկիր» չըսեք, ես երգերին մեր չըրքեք, «ես երկիր» չկա, մեր երգերն է, կհասկընա՞ք, մերը, ըշտը «ես երկիր» կըսենք ու հեշտ ու հանգիստ ո՞ր կերթանք, ընչի՞ կերթանք, կըռնա՞ք ընծի ըսեք: Ի՞նչ է թո՞ւրքն է ընկել հետևներիցս: Ըսեք, դե ըսեք...»,-ցավոք, արդիական է այսօր էլ: Ինչու:

Եվ իհարկե ճովակային ավարտը գործերի՝ խոսում, ասելիքով հարուստ, հույզերի ու զգացողությունների առումով՝ ճշմարտացի: «Տերտեր էլ բերեցին, կարգ կարդաց, հավիտենական դռներ բացելու աղոթքը կարդաց, դե՛, մարդիկ էլ կեսը հասկացան, կեսը չլսեցին, բայց վերջում խաչ հանեցին իրենց երեսներին, օղորմի մրմնջացին...» կամ «Ա՛յ մարդ, քաղըրցիք բիտուում է քաղի-քաղ կոչիկ կհազնի՞ն, թե՛՞ ընթաց է մաշված, օր կամընչեն բերեն փինելու...»: Եվ ճակատագրեր՝ գուցե հայի և մարդկային պարզապես՝ համամարդկային տեսանկյունից՝ կրկին հոգեբանորեն քննված, մարդկայնորեն հասկանալի՝ առանց վերնագրային-անվանական տարանջատումների՝ ամբողջ ժողովածուում, որովհետև իսկապես գիրքն ամբողջական է՝ կյանքը՝ բոլոր կողմերից, երևել, այսօր, վաղը... Մարդկային ճակատագրեր, հույզեր, զգացումները ու զգացողություններ՝ տրամաբանորեն, հոգեբանորեն, փիլիսոփայորեն և իհարկե կերպարների ընտրության առումով՝ ճշմարիտ, իրական, ընդունելի:

Կարոտի, վերհուշի, լուսավոր մանկության և ի վերջո, ողբերգության, հակասական զգացողությունների մի խառնուրդ է «Չլե գնդակը» պատմվածքը: Իսկ մեծ հաշվով՝ հիմնավոր մանկական ու պատանեկան խաղերի՝ հիշողությամբ վերականգնումն է միայնակ պատերազմական խեղճությունն ու մինչև հոգեբանական և ֆիզիկական պայքարի անկարողություն՝ պայմանավորված առանց այն էլ չունեցածից ստացած ունեցածը պահպանելու անմասնորոշ ճիգերով, ինչը վերածվում է մանկական կյանք՝ հանուն անհնարինով ունեցածի՝ վախճանի:

Հետաքրքիր է անգամ ողբերգական իրադարձությունները պատմելու թափն ու թեթևությունը: Սա ևս ինքնօրինակ ոճի և մտածողության արգասիք է: Մարդկային ճակատագրերի փոքրիկ պատում է «Բիճ Արսենը» գործը: Գրողը հյուսում իր բաժին հերոսի բաժին տաք հեքիաթը. կտրվում են մի պահ հեքիաթն ու իրականությունը, հետո պարզվում է՝ սրանք երբևէ միասին չեն էլ եղել և ոչ էլ առանձին. Արսենի կյանքը հեքիաթ է, հեքիաթը՝ իրականությունից պոկված մի փերթ, որ մնում է այնքան հաստատուն, թվում է՝ հենց կողքիդ են հերոսը, հերոսուհին, երազը, հեքիաթն ու այս ամենը համակարգող-հյուսողը: Եվ կրկին կտրվում է միջավայրին հատուկ խոսվածքի տեղին գործածությամբ, մարդկային անցյալի հավաստի, արդիական բոլոր ժամանակների համար. չէ՞ որ պարզ մարդկային հարաբերությունների մասին է խոսում գրողը:

Եվ մի ամբողջ երկար ու ձիգ կյանքի պատմություն, ասես կենսագրության ման երկարող՝ ծնվող-մեծացող և հուշերի մեծ ու փոքր պատառիկներ, որոնք հատիկ առ հատիկ, առանց ներքին մասնատվածության, գալիս են ամբողջացնելու պատմությունը: Իսկ ի՞նչ է այս. ինքնակենսագրություն, կենսագրություն՝ այլ ձեռքով գրված, թե՛ ընդամենը... Գուցե առաջին հայացքից մակերեսային դիտարկմամբ՝ մի Բողարի պատմություն, իսկ իրականում բազմաշերտ. մանկական ջերմ զգայություններից կյանքը հասնում է խորին փիլիսոփայական ըմբռնման՝ անտատան լարվածությամբ, լիարժեք և անսպասելի ավարտով:

Ժամանակի և իրականության մասին խոհերի ինքնատիպ խտացում է «Ո՞ր ես, ճալա» պատմվածքը, որը հատված է համանուն վիպակից: Այսպիսին է Ս. Դուկասյանի փոքրիկ ու ամփոփ ժողովածուի ընդհանուր բնութագիրը, ինչը մեկ անգամ ևս գալիս է ապացուցելու, թե «ներկայացման» ինչպիսի կառույց կարելի է ստեղծել՝ արարելու և հասնելու ցանկալի արդյունքին:

Իսկ ովքե՞ր են նրա հերոսները՝ սկսած մեր ժամանակներից մինչև մեկ և ավելի հարյուրամյակ ավելի առաջ հայը՝ պատմական բախտ ու ճակատագրով և իր անհատական, անկրկնելի գոյությամբ, կենցաղով, ապրելակերպով, վարքուբարքով: Գնահատականը նրանց կամ, ավելի ճիշտ, հեղինակի, այս դեպքում նաև ռեժիսորի, անժխտելի և, անշուշտ, անկեղծ ու անմիջական ներկայությունը իրադարձությունների հոսքին նաև գեղարվեստորեն:

Կարոտի, վերհուշի, լուսավոր մանկության և ի վերջո, ողբերգության, հակասական զգացողությունների մի խառնուրդ է «Չլե գնդակը» պատմվածքը: Իսկ ովքե՞ր են նրա հերոսները՝ սկսած մեր ժամանակներից մինչև մեկ և ավելի հարյուրամյակ ավելի առաջ հայը՝ պատմական բախտ ու ճակատագրով և իր անհատական, անկրկնելի գոյությամբ, կենցաղով, ապրելակերպով, վարքուբարքով: Գնահատականը նրանց կամ, ավելի ճիշտ, հեղինակի, այս դեպքում նաև ռեժիսորի, անժխտելի և, անշուշտ, անկեղծ ու անմիջական ներկայությունը իրադարձությունների հոսքին նաև գեղարվեստորեն:

Կարոտի, վերհուշի, լուսավոր մանկության և ի վերջո, ողբերգության, հակասական զգացողությունների մի խառնուրդ է «Չլե գնդակը» պատմվածքը: Իսկ ովքե՞ր են նրա հերոսները՝ սկսած մեր ժամանակներից մինչև մեկ և ավելի հարյուրամյակ ավելի առաջ հայը՝ պատմական բախտ ու ճակատագրով և իր անհատական, անկրկնելի գոյությամբ, կենցաղով, ապրելակերպով, վարքուբարքով: Գնահատականը նրանց կամ, ավելի ճիշտ, հեղինակի, այս դեպքում նաև ռեժիսորի, անժխտելի և, անշուշտ, անկեղծ ու անմիջական ներկայությունը իրադարձությունների հոսքին նաև գեղարվեստորեն:

Կարոտի, վերհուշի, լուսավոր մանկության և ի վերջո, ողբերգության, հակասական զգացողությունների մի խառնուրդ է «Չլե գնդակը» պատմվածքը: Իսկ ովքե՞ր են նրա հերոսները՝ սկսած մեր ժամանակներից մինչև մեկ և ավելի հարյուրամյակ ավելի առաջ հայը՝ պատմական բախտ ու ճակատագրով և իր անհատական, անկրկնելի գոյությամբ, կենցաղով, ապրելակերպով, վարքուբարքով: Գնահատականը նրանց կամ, ավելի ճիշտ, հեղինակի, այս դեպքում նաև ռեժիսորի, անժխտելի և, անշուշտ, անկեղծ ու անմիջական ներկայությունը իրադարձությունների հոսքին նաև գեղարվեստորեն:

Կարոտի, վերհուշի, լուսավոր մանկության և ի վերջո, ողբերգության, հակասական զգացողությունների մի խառնուրդ է «Չլե գնդակը» պատմվածքը: Իսկ ովքե՞ր են նրա հերոսները՝ սկսած մեր ժամանակներից մինչև մեկ և ավելի հարյուրամյակ ավելի առաջ հայը՝ պատմական բախտ ու ճակատագրով և իր անհատական, անկրկնելի գոյությամբ, կենցաղով, ապրելակերպով, վարքուբարքով: Գնահատականը նրանց կամ, ավելի ճիշտ, հեղինակի, այս դեպքում նաև ռեժիսորի, անժխտելի և, անշուշտ, անկեղծ ու անմիջական ներկայությունը իրադարձությունների հոսքին նաև գեղարվեստորեն:

Կարոտի, վերհուշի, լուսավոր մանկության և ի վերջո, ողբերգության, հակասական զգացողությունների մի խառնուրդ է «Չլե գնդակը» պատմվածքը: Իսկ ովքե՞ր են նրա հերոսները՝ սկսած մեր ժամանակներից մինչև մեկ և ավելի հարյուրամյակ ավելի առաջ հայը՝ պատմական բախտ ու ճակատագրով և իր անհատական, անկրկնելի գոյությամբ, կենցաղով, ապրելակերպով, վարքուբարքով: Գնահատականը նրանց կամ, ավելի ճիշտ, հեղինակի, այս դեպքում նաև ռեժիսորի, անժխտելի և, անշուշտ, անկեղծ ու անմիջական ներկայությունը իրադարձությունների հոսքին նաև գեղարվեստորեն:



ՄԻՐԱՆՈՒՅՇ ԴՈՒԿԱՍՅԱՆ

ԵՍ ԻՆՉ ԵՂԱՎ...

Գոհարի համար առավոտյան առաջին գործը սուրճ խմելն էր, հետո նոր՝ այն ամենը, ինչը համարվում էր առօրյա հոգս: Սուրճը նրա ամենակարևոր մասն էր. չէ՞ որ այն լոկ սուրճ խմել չէր: Նա պետք է բաժակը խմամքով շուռ տար ավստի մեջ, հետո անձեռոցիկը ծալեր, բաժակը դներ անձեռոցիկի վրա, որ լավ չորանար՝ սուրճի մրուրի մեջ պատկերները տեսանելի լինելու համար: Հետո գալիս էր ամենակարևոր մասը: Գոհարը ակնոցը դնում էր աչքերին ամեն անգամ հիշելով, որ նորը պետք է պատվիրել: «Լավ չի երևում» ասելով՝ բաժակը վերցնում էր ու սկսում այնտեղ փնտրել իր ուզած նորությունները:

Ի՜յա, ես ի՞նչ բան է: Ես ընչի՞ է ըսքան սև: Ամա՛ն, Կարոյիս բան եղած չեղնի՞... Վա՛խ, վա՛խ, վա՛խ, ուրախանում է, ըստեղ մե սիրուն վարդուկ կա, ըդիկ լավ խաբար է: Տա՛ Աստուծո՛ւ, ու խաչակնքում է երեսը: Հետո Գոհարը շարունակում է «տընտըղել» բաժակը: Ու՛խա՛յ, սամալյոտ կերևա: Վաղո՛ւս բըղի գա: Քանի անգամ է, կգանգե, կըսե՛ բղի գա: Հը՛լը սպասե՛, ես երկու թռչունն ի՞նչ գուզեն: Լա՛վ լուր եք բերել, մեռնի՛մ ձեզի, հաստատ Սարգսիսցս է: Հա՛, հա՛, ընիգ միշտ ինձի լավ խաբարներ կենե: Կըսե՛ մա՛ ջան, դու քեզի լավ նայե, չըհիվընդնաս, ես է, տունս սարքեմ, պըրծնիմ, գուքամ թու ետևից, քեզի կտանցի: Ե՛, լավ, ես օր էրթամ Սարգսիս մոտ, մյուս էրեխեքս չե՛մ նեղվի, ըբը աղջիկս՝ Աստղիկը, ի՛նչըղ կնեղվի: Ենոք էլ մե կողմից կկանցեն: Կրակն եմ ընկել. որի՞ մոտ էրթամ... Էրթա՛մ...

Հետո Գոհարը անօգնական մայրում է շուրջը: Լիքը կահկարասի է դրված, բայց տունը դատարկ է... Բաժակը ձեռքին, անգոր ձեռքերն ընկել են ծնկներին: Ո՞վ գիտե՛ ինչքան ժամանակ է անցնում, ուշքի է գալիս, գավաթը բարձր, հորիզոնական պահում է աչքերի առջև, աղոթքի պես մի բան է մրմնջում, բուք մատով խփում է բաժակի հատակի սև մրուրին ու լարված, երկար նայում:

Նապատակ էի դրել: Աստված ջան: Լո՛ւյս է, լո՛ւյս, մեռնե՛մ ձեր ջանին, լո՛ւյս է: Աստու՛ն լո՛ւյսն էլ ձեզի հասնի, բալե՛ք ջան: Եվ թաշկինակը հանելով գոգոնից գրպանից՝ սրբում է իրենց-իրենց գլորվող տաք արցունքները:

Թաղը կամաց-կամաց արթնանում է:

Մարդ էլ չի մնացել: Ո՞ր են գնում: Գնում են ու գնում: Սեփական, գեղեցիկ տները թողնում են տան մեծերին, իսկ եթե մեծեր չկան... Փակում են դռները ու գնում...

Ամենակենսուրախ, աշխույժ թաղերից մեկն է:

Ե՛, ո՞ւր մնացին նրանք, ովքեր կյանք ու շունչ էին տալիս թաղին: Ժողովուրդն իր բնութագիրն ունի ամեն թաղի մասին: Սա քաղաքի հայտնի թաղերից է, քանի որ այստեղ բնակվում են շատ «հայտնի» դեմքեր: Ձախելների համար թաղը պարծանք ունի: Հայտնի դեմքերից մեկը «խառնոշի» է: «Թաղին «կնայե»: Դե՛, տղերք են, բազար կերթան, օրվա հաց կհայթայթեն, մարդ-մուրդ չի կըռնա իրանց խաթրին կռմի»: Իսկ հիմա թաղը կարծես լռության մեջ է թաղվել: Գնացել են «հայտնի» և թե՛ «անհայտ» դեմքերը: Մի տեսակ որբացել է թաղը:

Ես տիկին Գոհարը ինչի՞ չեղևաց, հնամաշ պայուսակը ուսը գցելով, ինքն իրեն խոսելով՝ աշխատանքի է գնում փինաչի վարպետ Համոն:

Մանկավարժ հարս կա թաղում, վարպետ Համոյին «հնակարկատ» է կոչում, բայց դա նրա սրտով չէ. «Չէ՛, հարս ջան, ես փինաչի եմ, թող փինաչի էլ մնամ: Հնակարկատ օր ըսիմ, պաշտոնս բըղի բարձըրնա՞»,-ասել ու ծիծաղել էր՝ երկի մայլի հարսին չվիրավորելու համար:

Հա՛, փինաչի Համոն գարմացավ, որ տիկին Գոհարը չեղևաց բակում: Ախր ամեն առավոտ ինքը գործի է գնում, տիկին Գոհարը բակն է ջըրջկնում ու իր տված բարևին այնպես է պատասխանում, որ Համոն մոր կարոտն է առնում: «Այ բարի լո՛ւյս, Համո՛ ջան, Աստու՛ն բարին, Աստված խեղն ու բարին տա քեզ, առողջ էղիր, էրեխոցդ գլխից՝ անպակաս»:

Համոն հեռանում էր տիկին Գոհարի տան մոտից, բայց դեռ աղոթք-բարի լույսը շարունակվում էր...

Թնդում է թաղը. տիկին Գոհարը... հանկարծամահ է եղել:

Չի կըռնա էղնի...

Էղ ընչի՞՞ հանկարծ որոշեց մեռնել...

Քա երևի իրիկուն իրար հետ խորաթա կենեից՝ դուսը նստած, չի կըռնա էղնի: Քոռանամ ես, քոռանամ,-տանջվում է հարևանուհի տիկին Սոֆիկը,-կարոտից մեռավ, ըբը ի՞նչ գիտեք, չորս էրեխա ունեմ ու ամտեր մնա ես գար ու զըմբա տան մեջ: Կմեռնի, ըբը ի՞նչ կեղնի: Մենք օր կապրինք, գիտե՞ք ըդիկ ապրել է՞. ըշտը ամոթախեղդ կապրինք,-մորմոցում-կսկծում է տիկին Սոֆիկը՝ իր դարդն էլ խառնելով տիկին Գոհարի դարդին: Թաղը իրար էր խառնվել:

Հարևանները փորձեցին գտնել Գոհար մայրիկի չորս երեխաներից գոնե մեկի հասցեն, բայց... ապարդյուն: Հատուկներ հարազատները նույնպես չկարողացան օգնել այդ հարցում, և երեք օր հետո որոշեցին հողին հանձնել Գոհար մայրիկին:

Հուղարկավորությունը նոր խնդիրներ առաջ բերեց: Տղամարդիկ քիչ էին, շատերն էլ՝ ծերունիներ ու երեխաներ:

Այ հողը մեր գլխին. նոր կտեսնիմ, օր չորսբոլորս տղամարդ չի մնացել,-մղկտում էր տիկին Սոֆիկը:

-Տղամարդն ի՞նչ գործ ունի մեզի հետ: Խեղճերը ճար չունենին ընտանիք պահելու, ըստը գլուխներն առել, կորել են, փախել են մեզմից, քաղքից, Ես կյանքից:

Բայց ճարը գտնվեց. թաղեցիները իրենց բարեկամներին կանչեցին, Գոհար մայրիկին առողջ-փառաջ տարան հանգստարան: Տերտեր էլ բերեցին, կարգ կարողաց, հավիտենական դռները բացելու աղոթքը կարողաց, դե՛, մարդիկ էլ կեսը հասկացան, կեսը չլսեցին, բայց վերջում խաչ հանեցին իրենց երեսներին, օղորմի մրմնջացին... Իսկ երբ դուրսկա-հարները գլեցին «Աս-մուք անպե-րը», մի հեկեկոց դրին, որ տղա-մարդիկ անգամ չդիմացան. թաշ-կինակները տարան աչքերին՝ հո-տոլ վարար արցունքները սրբելու: Ամեն մեկը իր վշտի ծովն էր ընկել...

Հուղարկավորության ղեկա-վարը փինաչի Համոն էր: Չեռքով նշան արեց, որ կանայք հեռա-նան, իսկ տղամարդիկ՝ անծանոթ տղամարդիկ, չորս զավակ ծնած-մեծացրած Գոհար մայրիկին քահանայի մեռելոց երգի տակ ճանապարհեցին դեպի հավեր-ժություն...

Փինաչի Համոն շատ փափուկ սիրտ ունի. էլ Գոհար մայրի-կի տան մոտով չի գնում: Ուրիշ, ավելի երկար ճանապարհով է

դուրս գալիս թաղից: Հեռվից, մի տեսակ ինքն իրենից թաքուն նա-յուն է նրա տան կողմը՝ հուսալով, որ զավակներից զոնե մեկնունե-կը կարող է «երագ-մերագ» տե-սած եղնի, ու սիրտը թելադրե, գա մորը տեսնելու:

«Ե՛հ, եզուց ես օր մեռնիմ, տղես կըռնա՞՞ հողանդիաներից գա, հաս-նի դիակիս»,-ծանր մտքերով տար-ված Համոն գնում էր աշխատան-քի: Հասավ կենտրոնական հրա-պարակ: Մի պահ կանգ առավ կի-սաքանդ եկեղեցու դիմաց: «Աստ-ված ջան, մե բանըմ կըհասկընամ, օր մինչև քու տունդ չչինվի, մեր վերջին դոմիկը չի հանվի քաղքեն, Աստու բարև տվող էլ չմնաց. քա-ղաքը դարդըկվել է»:

Հասնելով իր բուրդային Հա-մոն բաց արեց դուռը, կանգնեց դրսում, հանեց ծխախոտատու-փը, վառեց մի ծխախոտ: «Ծխեմք, նոր անցնիմք գործի»:

Օրը կիսվում էր, բայց փինա-չի Համոյին գործ բերող չկար: Համոն ապառաջակից համեց կնոջ խնամքով փաթաթած սրբի-չը, փռեց հնակարկատի սեղա-մին, դասավորեց նախաճաշիկը՝ հաց, պանիր, իրենց բոստանի թարմ կանաչին, նայե՛ց, նայե՛ց՝ չտեսնող աչքերով և ձեռք չտվեց ուտելիքին: «Ա՛յ մարդ, քաղք-ցիք բիտուուն թափ-թազա կոչիկ

կիսագնի՞մ, թե՛ էնքան է մաշված, օր կամընչեն բերեն փինեղու...»:

Ժամը յոթին մոտ Համոն փա-կեց բուրդային, վերցրեց պայու-սակը, որի մեջ չկերած նախա-ճաշն էր, և, աշխատանքային օրն ավարտված համարելով, ուղղ-վեց դեպի տուն: Անձրև էր մա-ղում, թեթև, խոշոր անձրև, և նա, վայելելով մաքուր օդը, դանդաղ, հայացքը դետուրեն ուղղելով հա-սավ թաղ: Տեսավ, որ հարևան Ռաֆիկենց դռանը երկու մեծ բեռ-նատար մեքենա էր կանգնած: Մի քանի տղաներ (իրենց թաղից չէին. թե չէ կճանաչեք) աշխուժո-րեն բերում էին իրերը, տեղավո-րում թափքին ու արագ մտնում տուն՝ հաջորդը բերելու: Տանտե-րերը չէին երևում:

Համոն հոգոց քաշեց, հենվեց մոտակա տան պատին, ու մտքե-րը տարան նրան:

Թաղի ամենալավ ընտանիք-ներից մեկն էր Ռաֆոյի ընտա-նիքը: Համեստ, աշխատասեր, լավ հարևան: Գլուխները կախ-ապրում էին, ոչ մեկի մտքով չէր անցնում, որ Ռաֆիկն էլ կարող էր հեռանալ քաղաքից: Երեկուները հաճախ էին նստում հենց այս պա-տի տակ դրված փայտե իշառու-նուկներին, խոսում էին, քննար-կում, քննադատում, տխրում, որ կյանքը էսպես փոխվեց, որ երկի-

րը ձեռքից գնում է, որ ամեն ինչ գլխի վրա է շուռ եկել... Համոն բոլորի հետ համաձայն էր. գլու-խը տմբոմբացնում էր ու լսում: Չէր խոսում նաև Ռաֆիկը: Չեռ-քի թագբեղը խաղացնում էր մեկ հանգիստ, մեկ արագ-արագ և այսպես մասնակցում գրույցին:

Ռաֆիկի ընտանիքը ապրում էր չափի մեջ: Նրա ավագ որդին՝ Անդրանիկը, բժիշկ է, ապրում է Մոսկվայում: Չէ, նա նոր չէ, որ գնացել է: Ավարտեց Մոսկվա-յում, սովետի օրոք, աշխատել էր, ու պահել էին նրան որպես լավ բժշկի, չէ՛, նրա՛ Մոսկվայում ապրելը փախուստ չէր: Հայաս-տանի ծանր հիվանդները գնում էին Անդրանիկ Ռաֆայելովիչի մոտ, բուժվում, և ամեն տարի, երբ որոշում էր վերադառնալ, Հա-յաստանի հիվանդները «կապում էին նրա ոտքերը»:

Մտքերը թռան ոչ հեռու անց-յալ: Թաղի մեծերը, նստած այս նույն իշառունուկին, նորից խո-սում էին, դժգոհում, ու մեկը հան-կարծ բորբոքված գոռաց. «Այ մարդ, Ես կյանք չէ, օր մենք կա-րինք, գործ չկա, ապրուստ չկա, ես ես երկրի մերը...»:

Ու Ռաֆիկ մի ասա, մի առյուծ ասա: Լուռ, զուսպ Ռաֆիկը վեր թռավ ու գոռաց. «Ես երկիր» չը-սեք, Ես երգըրին մեր չըրքֆեք,

«Ես երկիր» չկա, մեր երգիրն է, կիսակընա՞ք, մերը, ըստը «Ես երկիր» կըսենք ու հեշտ ու հան-գիստ ո՞ւր կերթանք, ընչի՞ կեր-թանք, կըռնա՞ք ընձի ըսեք: Ի՞նչ է՛ թո՞ւրքն է ընկել հետևներիցս: Ըսեք, դե ըսեք...»:

Համոն պարզ հիշում էր այդ օրն ու տխրեց. գլուխն առավ ուսերի մեջ, փոքրացավ, աչքե-րը փակեց ու սկսեց այլևս ուրիշ մտքերի հետևից վազել: Ու երկի այդպես էլ պատին հենված մնար փինաչի Համոն, եթե Ռաֆիկենց բակից չլսվեր նրա ձայնը.

-Շուտ-շուտ երթ. լույսով դուրս գանք քաղքեն:

Բեռնատարները շարժվեցին: Ռաֆիկը դուրս եկավ, մի վեր-ջին հայացք գցեց տանը, փակեց երկաթյա դարպասը ու հանկարծ հետևից լսեց թռնիկի ձայնը.

-Պապ, պապի՛կ:

Ռաֆիկը հարցանական նայեց նրան: Լարվածությունից երեխան թրթռում էր.

-Պապի՛կ, բաց արա դուռը... Ծաղիկները չեն ջրել...

Սև ամպերը մեկից որոտացին. անհամբերությամբ թափվող կար-կուտն ասես թալկում էր Ռաֆիկի դարպասը, համառորեն կարկտա-հարում երկաթյա դուռն ու ռիթմիկ գոռում.

-Բացե՛ք, բացե՛ք, բացե՛ք...

ՊԱՐԱԴՈՔՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԻ «ՊԱՐԱԴՈՔՍԸ»



Երբ ապրում ես մի քաղա-քում, որտեղ ամեն ինչ թվում է պարադոքսային, անհնար է դրա հանդեպ անտարբեր վերաբեր-մունք ցուցաբերել: Իսկ երբ մի քանի անհաստ միավորվում են մեկ գաղափարի շուրջ, այդ պա-րադոքսում ծնունդ է առնում «Պա-րադոքս»-ը՝ «Արտուլաբ Գյումրի» մշակութային կազմակերպության կողմից իրականացված «Պա-րադոքս» նախագիծը: «Արտ-լաբ Գյումրի» մի քանի ուսանող արվեստագետների միավորում է Գյումրի քաղաքում, որը, կազմա-վորվելով 2022 թ.-ի հոկտեմբե-րից, մեկ տարի շարունակ «Պա-րադոքս» նախագծի շրջանակ-ներում ակտիվ գործունեություն է ծավալել Գյումրիում ժամանա-կակից արվեստի զարգացման ու տարածման համար: Այս նախագ-ծի ընթացքում ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղում պարբերաբար կազմակերպվել են ժամանակա-կից արվեստի աշխատարաններ, դասախոսություններ, ցուցահան-դեսներ ու հանրային միջոցա-ռումներ: Դասախոսություններով հանդես են եկել Վազգեն Պահլա-վունի Թադևոսյանը, Ալեքսեյ Մա-նուկյանը, Գոհար Սմոյանը, Գա-գիկ Ղազարեն, Արման Գրիգորյա-նը, Աղասի Թադևոսյանը և այլք: Տեղի ունեցավ շատ հետաքրքիր կապ ակադեմիայի ու ժամանա-կակից արվեստի խմբի՝ «Արտ-լաբ Գյումրի» միջև: Հրավիրյալ սեմինարավարները, աշխատա-

րանների մասնակից արվեստա-գետները, տեսաբանները, ինչ-պես նաև մասնակից արվեստա-գետները, ևս մեկ անգամ ռեա-լիզացրին իրենց տեսական և գործնական գաղափարները: Ե՛վ դասախոսություններն էր աշխա-տարանները, և՛ միջոցառումները՝ նպատեցին ու արդյունա-վետ եղան ուսանողների բազմա-մեղիա մտածողության համար: Դրա շնորհիվ, յուրաքանչյուր դասախոսությունից ոգեշնչված, մասնակիցներն սկսեցին աշխա-տել տվյալ միջոցներով: Տարած-վեցին ու հանրայնացվեցին ժա-մանակակից արվեստի միջոցնե-րը, օրինակ՝ լուսանկարչություն, վիդեոարտ, սթրիտ արտ, կոլաժ, փերֆորմանս արտ օբյեկտներ և այլն: Այսպիսով՝ յուրաքանչ-յուր դասախոսություն ունեցավ իր գաղափարային հանգուցա-լուծումը՝ ի դեմս ցուցահանդես-ներում օգտագործած միջոցնե-րի: Մյուս կողմից՝ բանախոսները դասախոսություններ ունենալով երիտասարդ ուսանողներին հա-մար, ևս մեկ անգամ բարձրա-ձայնեցին իրենց մտքերն ու ներ-կայացրին իրենց աշխատանքը, փորձի փոխանակում ունեցան սկսնակ արվեստագետների հետ: Տեղի ունեցան քննարկումներ, մտքերի փոխանակում: Ե՛չ տաղրվել է Գյումրու ռեսուրսների օգտագործումը նաև տեսական առումով, ժամանակակից արվես-տի մասին խոսույթներ ու քննար-

կումներ իրականացնելով:

Նախագծի ամենակարևոր ձեռքբերումը նախևառաջ երիտասարդ արվեստագետնե-րի ու թիմի մասնակիցների հա-մար նորարարական ու փորձա-արարական հարթակ ստեղծելն ու ժամանակակից արվեստի մտա-ծողությամբ վարակելն էր: Քա-նի որ խմբի անդամները բոլորը երիտասարդներ են, ուսանողներ, նրանց համար շատ լավ հարթակ էր մասնագիտական որակների բարելավման, նոր գիտելիքների ու փորձառություն ձեռքբերման ու կատարելագործման համար: Եթե մինչ այս ուսանողները ժա-մանակակից արվեստի մասին ունեին զուտ տեսական գիտելիք-ներ, ապա ամօժամբ առեթեսվեցին ժամանակակից արվեստի հետ ու սկսեցին աշխատել ժամանակա-կից միջոցներով: Սկսնակ արվես-տագետներն ու ուսանողները հնարավորություն ունեցան իրենց արվեստային գաղափարներն իրականացնելու, ազատ արտա-հայտվելու, նոր տեխնիկաներ կիրառելու և ընդլայնելու մտախո-րիզումը: Երկարատև աշխատան-քը խմբի անդամներին հնարա-վորություն տվեց պարբերաբար մտորելու համայնքում գոյութ-յուն ունեցող մշակութային բա-ցերի մասին: Նրանց համար սա եզակի հնարավորություն էր ակադեմիական սահմաններից դուրս ստեղծագործելու և նախա-ձեռնող կողմ լինելու: Ուսանող արվեստագետները կարողացան անհատական ցուցահանդեսնե-րով հանդես գալ: «Պարադոքս» նախագծի շրջանակներում Գյում-րու տարբեր վայրերում միջոցա-ռումներ իրականացնելով՝ հա-սարակությունը ևս որոշակիոր-են առեթեսվեց ժամանակակից արվեստի հետ, ինտերակտիվ ցուցադրություններով անգամ մասնակից դարձավ դրանց: Նա-խագիծը նպատեց նաև համայն-քում դրա քիչ թե շատ տարած-մանն ու պրոպագանդմանը: Այս-պես՝ «Արի նկարենք» լոկալ նա-խագծի շրջանակներում արվես-տագետ Լիլիա Տոնոյանի շնոր-

հիվ կազմակերպվեց նախ սթրիտ արտի վերաբերող աշխատա-րան: Տեղի ունեցավ համագոր-ծակցություն «Գյումրի սթրիտ արտ» արվեստային խմբի հետ: Դրանից հետո քաղաքում տար-բեր անկյուններում ու փողոցնե-րում, սթրիտ արտի տեխնիկանե-րով ու միջոցներով /տրաֆարե-տային տեխնիկայով/ գրվեց «Արի նկարենք» իրավիորդ, իրազեկող կարգախոսը: Ակցիան կանչ էր, հորդոր գալու ու միանալու նա-խագծին միասին նկարելու և քա-ղաքային արվեստ ստեղծելու: Սրան հաջորդեց Գյումրու Շիրա-կացի փողոցի վերջնամասում կի-սավեր շինության պատին մեծա-ծավալ սթրիտ արտի ստեղծումը: Ընթացքում, բացի մասնակից-ներից, հնարավորություն ունեց-ր մասնակցելու ցանկացած մարդ: Նախագիծը ինտերակտիվ էր ու ազատ: Նույն տարածքում իրա-կանացվեց նաև երկրորդ սթրիտ արտը: Փորձ արվեց տարածքը դարձնել քաղաքային արվես-տի ու ազատ ստեղծագործման գոտի: Անդամներից մեկի՝ Քրիս-տինե Սարգսյանի կողմից իրա-կանացված «Մտա-պատկերներ» անհատական նախագծում ներ-կայացված կոլաժներում շոշափ-վեց համայնքի համար ակտուալ ու գրեթե անլուծելի մի խնդիր՝ թափառող շենքի հարցը: Ի դեպ, այստեղ ոչ թե կենցաղային մա-կարդակի գործեր էին, այլ էսթե-տիկ վերաբերմունք կենցաղա-յին խնդրի վերաբերյալ: Ցուցադ-րությունից բացի, Քրիստինեի կատարած կոլաժների հիման վրա ստեղծվել էին կադրեր /սթիկերներ/, որոնք տարածվե-ցին ամբողջ քաղաքում: Լքված ու մոռացված տարածքների հետ աշխատելու ընթացքում ներկ-վեց ու վերականգնվեց քաղա-քում արդեն մոռացված, հորի-դային Միության համատեքս-տում տեղադրված, այնուհետև ապակոնտեքստայնացված հու-շակոթողը՝ Տերյան փողոցի վերջ-նամասում նախկին Սառնարանի գործարանի մոտ: Քաղաքի այն հատվածը, որտեղ գտնվում է հու-

շակոթողը, ամենաբանուկ վայրե-րից է, սակայն անտեսված էր մինչ այդ: Ներկելուց ու վերականգնե-լուց հետո համաքաղաքացիների ուշադրությունը կրկին սևեռվեց տվյալ տարածքի ու հուշակոթո-ղի վրա: Բարձրացվեց նաև պահ-պանության ու խնամքի հարցը: Խմբի անդամ Մելինե Գալստյա-նի «IlluminateX» անհատական ցուցադրության ժամանակ օգ-տագործվեցին ժամանակակից տեխնիկաներ, որոնք դեռ չէին կիրառվել Գյումրիում: Նման մո-տեցում կամ փորձառություն չի եղել անգամ Հայաստանի ժամա-նակակից արվեստի համատեքս-տում: Գյումրու տեսարանները ներկայացնող լուսանկարներում, հանդիսատես այցելուն հնարա-վարություն ունեց միջամտութ-յուններ կատարելու, հենց նկար-ների վրա նկարելու ֆոտոգրային ներկերով փոխելով իրականութ-յան պատկերները: Իոնային լույ-սերի ներքո միանգամայն փոխ-վում էր ստացված պատկերն ու լուսանկարների, քաղաքային տեսարանների պատկերները: Սա իր բնույթով ինտերակտիվ ցուցադրություն էր, հանդիսա-տեսի անմիջական մասնակցութ-յամբ ու ներգրավվածությամբ: «Ձուգահեռներ» ցուցահանդեսի ժամանակ Հասմիկ Թադևոսյանը իրականացրեց մի փերֆորմանս, որին մասնակից դարձան ներկա-ները: Հենց հանդիսատեսի մի-ջոցով ու միջնորդությամբ էր, որ կյանքի կոչվեց փերֆորմանսը: Իսկ արդեն նախագծի ընթացքում հետաքրքրություն ցուցաբերած ու հրավիրված արվեստագետ ու սանողներ Սամվել Վարդանյանն ու Մուրադ Մուրադյանը Գյում-րու գեղարվեստի ակադեմիայի բակում, որը վերջին մի քանի տարիներին ոչ թե փակ բուհա-կան տարածք է, այլ հանրային վայր, տեղադրեցին «Ժամանակ» արվեստային օբյեկտը: Այն ևս պահանջում է հանդիսատեսի ներկայությունն ու փոխլրացում:

Գայանե ՊԱՊԻՎԱՆ
Արվեստաբան



Հարություն ՄԱՐԳՍՅԱՆ

ԻՆՉ Ո՞ՒՄ ԵՍ ԹՈՂՆՈՒՄ

Հեռանում է նավը ափերից իմ սրտի, Փոքրանում է նրա առագաստը ճերմակ, Ու ճայերն են փարվում ալիքներին ծովի, Ես մեռնակ եմ ափին ու զլխահակ

ՔԱՄԻՆ ՍԵՐՍ ՏԱՐԵԼ Է

Սերս փնտրել եմ հեռվում՝ Պարզ երկնքում կապուտակ, Այնինչ կողքիս է շրջել՝ Թաքնված հենց կրծքիս տակ: Սերս կպել է ծաղկին, Երբ եկել է վառ գարուն, Սերս սրտիս է բացվել՝ Կոկոն վարդից էլ սիրուն: Սերս քարին է կպել՝ Շուրջս քար է ամենուր, Ուրիշ մի քար է սերս, Ապառաժից էլ ամուր: Սերս կպել է թղթին՝ Մոտավելով դարձել երգ: Քամին երգս տարել է՝ Սրտիս թողել խորը վերք:

ՀՈՒՇԵՐԻՍ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Հուշերս, հրեշտակի թևեր առած, Դիրքավորվել են հոգուս խրամատում, Մեկ արտասվում եմ, մեկ պար գալիս, Սիրտս ճնկվում է, բորբոքվում:

Գիշերով եմ վերադարձել հուշերս՝ Խառնված աստղերի շողերին, Փոխվում եմ իմաստը բառերիս, Հայտնվում՝ երգերիս տողերին:

Բազմել եմ սառած կոպերիս, Ուզում եմ՝ աչքերս կուրաճան, Խառնվում արցունքիս կաթիլին Ու ստիպում, որ այն հորդանա:

ԱՇՈՒՆԸ ՄԻ՝ ՍԻՐԻՐ

Մի՛ խոսիր ինձ հետ աշնան շուրթերով, Աշնան շուրթերը լուռ են, ամոթխած, Մի՛ լցրու հոգիդ աշնան գույներով՝ Պաղ երանգներով մշուշից խամրած:

Միշտ հեռու մնա չոր տերևներից, Նրանց ծածկոցով դու չես քերամանա, Պաղ քամին մի օր քշի, կտանի, Փարթան խաշամից ոչինչ չի մնա:

Հանկարծակի է աշունը մեռնում՝ Հոգեվարքի պաղ ամպրոպից վերջին, Աշխատիր այրվել հզոր կայծակից, Շանթ ու որոտից գարնան առաջին:

Մի՛ խաբվիր աշնան արևով դալուկ, Չեմ ուզում աշնան անձրևով թրջվես, Գարնան պես մնա՛ միշտ մաքուր ու կույս, Դու կույս մնալուց երբեք չամաչես:

Գարնանն ես ծնվել, միշտ գարուն սիրիր, Մնա՛ գարնան պես փարթամ ու կանաչ, Կոկոն ծաղկի պես բա՛ց ալ շուրթերդ, Ժպտա՛ ու դարձիր դու հանրաճանաչ:

ԴՈՒ ԵՍ ԿՈՂՔԻՍ

Այսօր լուսինը ինձ հյուր է եկել՝ Թողել աստղերին իր թափառական, Մթազնած հոգուս նա լույս է բերել, Հեքիաթ է պատմում տիեզերական:

Գիշերն այնպես լույս ու տաք է այսօր, Որ թիթեռները ճախրում են անհոգ, Որ ծաղիկները թերթիկներով բաց Ջրուցում են ու տալիս իրար գովք:

Այնպես անհոգ ու հանգիստ եմ այսօր, Քանզի դու ես լուռ իմ կողքին նստած, Երկինք ու աստղեր նախանձում են մեզ, Դու իմ թիթեռնիկ, ծաղիկ իմ բացված:

Առուն էլ ուրախ մի երգ է երգում՝ Խառնած քրքիջը մեր լուռ գրույցին, Լուսինը խոնարհ, լուսինը անքուն՝ Աջը տնկել է արևածագին:

ՄԻ ԿՈՐ ՈՒՌԵՆԻ, ՄԻ ՎԱԶՈՂ ԱՌՈՒ

Ուռին վարսերով շոյում է առվին, Առուն ծիծաղից քրքիջ է հանում, Կանաչ վարսերից արցունքն ուռենու Անձրևի մման առվին է կաթում: Ուռին պատմում է կյանքից հոգսաշատ,

Աղմկոտ առուն ոչինչ չի լսում, Արցունքն անձրևոտ իջնում է կաթ-կաթ, Առուն սրընթաց հեռուն է տանում:

Ափեզրի կանաչ այս ծառաշարում Միայն ուռին է կորացած մեջքով, Իր թաց վարսերով շոյում է առվին, Առուն քրքում, փախչում հեզանքով...

Առուն իր դարդը ձենով է պատմում, Նա չի փսփսում ծառի ակամջին, Առուն ու ուռին իրար չեն լսում, Խեղճ ու հնազանդ, հլու այս կյանքին:

Առուն իր ցավը ծովին է տանում՝ Խառնած դարդերին լացող ուռենու, Անձրևն արցունքոտ կաթում է, կաթում... Մի կոր ուռենի, մի վազող առու:

ԱՎԱՆՈՒՄ ԲԵԿՈՐ ԿԱ ՈՒ ՄԱՀ

Մի լույս է շողում, Ոռնում է ակամբ՝ Երկնքում կորչում մի պահ, Կուրծքը պողպատ է, Անաստված է, անխիղճ, Կան չարք է, կան էլ սատանա: Դժոխքում է ծնվել, Սնվում է արյամբ, Չես սպասում՝ որտեղից կգա, Արծվի պես արագ է, Ճարպիկ, խորամանկ, Գիշատիչ վագրի պես ագահ: Երբ հասնում է հողին Բացվում է ակամբ, Թերթերը սուր են, երկաթյա, Ականջ սիրում է Հերոսներ ու արյուն, Ականջում բեկոր կա ու մահ:

ՄԻ ԺԱՄ ՇՈՒՏ, ՄԻ ԺԱՄ ՈՒՇ

Ես համոզել եմ պայծառ արևին Ու օգնել, որ շուտ սարը բարձրանա,

Դեռ մի ժամ էլ կա աքլորականջին, Թող մի ժամ առաջ օրը լուսանա:

Շուրթս ժամ առաջ հավի թո շուրթին, Կուզեմ ժամ առաջ ժպիտդ տեսնել, Կուզեմ գուրգուրես իմ պոկած վարդին Ու թո տաք շուրթից իմ երզը լսել:

Վայրկյանը այսօր թող դառնա տարի, Որ լիակատար մենք սիրենք իրար, Մեր սիրով գերված օրը երկարի, Ոչ թե մի կարճ պահ, այլ ամբողջ մի դար:

Մեր բախտից օրը մի ժամ շուտ բացվեց, Թող մայրամուտն էլ մի ժամ ուշանա, Ես պինդ կբռնեմ արևի թևից, Որ հոիզոնից նա հեռու մնա:

ՆՎԵՐ ԵՐԿՆՔԻՑ

Քո վառ սիրուց խելագարված Բարձրացել եմ ամպերն ի վեր, Աստղիկները հյուսել իրար Ու բերում են ես քեզ նվեր:

Աստղիկները գողացել են Են խեղճ լուսնին թողել մեռնակ, Աստղիկները իմ գողացած Բերում են ես քեզ հիշատակ:

Աստղալույսը սեղմած կրծքիս, Շուրթիս՝ երզը իմ հորինած, Շամփիս հազար շանթ ու որոտ Ուղեկցում են ինձ գրկաբաց:

Արևի տաք շողերի հետ Ալանում եմ երկնքից ցած, Դու ապշել ես իմ սխրանքից, Երջանիկ ես ու զարմացած:

Խեղճ լուսինը ողջ երկնքով Կորած աստղերն է իր փնտրում, Դու աստղագարդ ոտից գլուխ՝ Լուռ ննջել ես իմ տաք գրկում:



Հայկ ՄԻՐՈՒՆՅԱՆ

ՍԵՆՏԻՄԵՆՏԱԼ ՄՊԱՍՈՒՄ

Առանց քեզ, թո պատրանքի, Քայլիդ բերած քնքուշ հովի Օրը օր չէ, ժամը ժամ չէ՝ Արտաշունն է, ակնթարթ է բեկումի, Մագ-մորուքի աճ է հիմար, Ուրիշ ոչինչ, ուրիշ ոչինչ... Երբ դու չկաս՝ վերս վար է, Աջս ձախ է, Աշխարհն է խորթ Սրտապատառ գլուխկոնծի... Երբ դու չկաս՝ Միտքս շփոթ բաբելական, Սիրտս ջրի դանդալուշ կաթ՝ Հուզական անոթներովս մեկ Նյարդենյա՛րդ, նյարդենյա՛րդ... Երբ դու չկաս ու առանց քեզ, Ես՝ մատնված մի դատապարտ, Ես՝ վճռաբեկ ու զլխահակ՝ Քայլերիդ մեռնահատ փամփուշտներից Գնդակահա՛ր, գնդակահա՛ր...

*** Դեղին փրփուրը հոգնած մոգերի ցող: Քեզ այս աշխարհում կա մեկը սպասող: Շոգ-շոգիացող արահետը այս Ինձ տանում է, իսկ քեզ չի բերում ավաղ:

Ինձ տանում է, իսկ քեզ չի բերում ավաղ: Հուլիսը թույն է ու հազ, արյուն ու աղ: Վերևից մոգերը փրփուր են ցողում՝ Լավ է, երբ աշխարհում կա մեկը սպասող:

Ամեն ինչ սինթեզ է ու շարժում է դախ, Թե գնաս պիտի՝ ուղիդ անխափան... Լավ է, երբ աշխարհում կա մեկը սպասող, Լավ է, երբ ունես կորցնելու մի բան:

*** Կապույտ գիշերի թովչանքից էլ վառ Դարձյալ կաթնով թո երեսն եմ հիշում՝ Քո կրակե գետ վարսերը վարար, Քո ժպիտը խնդության հաշիշում:

Ես քեզ չեմ տեսել արդեն քանի դար, Եվ չի լինում բրդեղ բեռը կյանքի-Կապույտ գիշերի թովչանքից էլ վառ

Քո հուշը ինձ տանում է զանցանքի: Ես քեզ չեմ տեսել արդեն քանի դար: Եվ միայն հուշով սիրտս ո՞նց ապրի-Կապույտ գիշերի թովչանքից էլ վառ Քո գալն եմ ուզում, Սիմոնյան Արփի:

*** Սա իմ կյանքն է: Այս գիշերը, այս ցերեկը, Այս հնոցը վազքից առաջ ու հետո, Սանդուղքին մոտենալիս ու հետո, Պարկը վերցնելիս ու հետո, Մրգոլին խմելիս ու հետո: Հենց սա է, որ կա: Այս ուզելու և չանելու, Չանելու և ուզելու, Անելու և զղջալու, Ձղջալով կրկնելու Սուրբ դաշնությունը: Ես եմ՝ իմ կյանքն է. Կաթսան, ուր թշնում են Աղջիկները՝ միշտ խոստացող, Ընկերները՝ ներող-լռող, Հարազատները՝ դարձած խոժոռ նվազախումբ, Անծանոթները՝ վարքիս խոտոր պլշած, Եվ ես՝

Հայացքումս բարի թեմ, Որ պարզում եմ անցնող օրվան, Եվ մի չգիտես թե ինչ անվերծանելի Խճճանքի, որ կյանք է կոչվում,

Որից ունեն և ես: Սա իմ կյանքն է: Այս կաթսան, ուր անզուսպ խիհրով Տապակվում ենք Ես և հոգսը, ես և սերը, Ես և ամենայն ինչ՝ Օր օրի ահագնացող Լեղակի անտակ ջրերի հետ Անդրովելիորեն համերաշխ: Սա իմ կյանքն է:

*** Աշունը էլ ոսկի չէ, հոգիս, Ներժ է, լատուն է կամ էլ պղինձ՝ Մի շարքաթ սուտ է խեղդում բկիս, Սակայն դու... դու սպասում ես ինձ:

Օրերն են դողում այս պաղ օդում, Իջնում են հուշիկ, տերևի պես... Տես, շունը դեռ շանն է կարոտում՝ «Սիրունս, ինձ վաղն էլ կսպասես»:

Ես քեզ սիրում եմ, ինչպես թերթվող Իմ ժապավենն եմ սիրում կյանքի-Տես, այս աշնան օրերը հերթով Դառնում են հուշ ու ծորում հանգիստ:

Սիրունս, սիրտ իմ, քեզ եմ ասում, Այս աշունը ոսկու մման չէ, Քեզ իմ փոխարեն երզն է կանչել, Սակայն դու... դու ինձ ես սպասում:

*** Վարքս խառը, ուղիս՝ շիտակ, Կտրելուց առաջ չեմ էլ չափել-Պապլավոկի պատերի տակ Սիրունիս երեկ սեր եմ խաբել... Ես թո առաջ, ես ձեր առաջ մի... Ո՞վ եմ- գուցե ինքս էլ չգիտեմ-Սակայն կանչիր խնդության ժամին, Աշնան մառը մորմոք է կիտել: Մոռացել եմ ես ամեն ինչ, Մոռացել եմ ես ամեն բան, Պապենական իմ սնդուկից Ելավ միայն մի չարխափան: Թափառեցի երևանով, Տվի քաղաքն իմ ոտատակ, Ինչի՞ց էի խեղճացել, ո՞վ, Ո՞վ էր պահում ինձ կրծքի տակ... Այնժամ մռայլ էր, մուգ ու անձրև, Սրտունս՝ ճաթ, շշում ինձ գտա: Եվ ես չեմ հիշում- կյանք է անցել-Սակայն բախտը ինձ մորից գթաց...

... Հիշում եմ՝ զլխիս փափախ էր սև, Ես նազանով պաղ թոն էի ցրել (Ես՝ թո առաջ, ես ձեր առաջ ո՞վ), Պանդուկներում էի լուսացրել, (Մի չար տղա՛ խաժ աչքերով), Ցավեր պարպել, գավեր հարբել-Մի բան ասե՛մ՝ հոգուդ չտաս, Կտրելուց առաջ չեմ էլ չափել-Ինչ արել եմ՝ լավ եմ արել, Ինչ չեմ արել՝ զլուխը քար-Սիրունիս երեկ սեր եմ խաբել... Պապլավոկի պատերի տակ:



Ռոբերտ ԽԼՂԱԹՅԱՆ

Ծնվել է 1959թ. Լենինական քաղաքում, ավարտել է թիվ 27 դպրոցը, կրթությամբ տնտեսագետ է, երեք անգամ հայր: Ստեղծագործել սկսել է բոլորովին վերջերս, գրում է հայերեն և ռուսերեն:

Տպագրված գրքերն են՝ «Ավատարիսկի ավտորուս Գյունրվա միջուկով», «Командор Андре», «Возвращение домой», «Алауди»:

ՄՈՒՐՃԸ

Երկու փոքրիկ զանգակների միջև խփում է զարթուցիչի փոքրիկ մուրճը: Չանգը հնչում է ամբողջ տնով, բայց ոչ այն պատճառով, որ զանգի ձայնն է ուժեղ, ուղղակի տունն է շատ հին: Ամբողջ տունը գիտի, որ դա Գասպարի զարթուցիչի ձայնն է: Այսպես է արթնանում Գասպարը վաղ առավոտյան: Նրա համար մուրճի թակոցը իր կյանքի իմաստն է: Բանն այն է, որ Գասպարը դատավոր է: Նրա համար մուրճը աշխատանքային գործիք է. մուրճի հարվածով նա որոշում է, թե ով ինչպես է ապրելու, մեղավոր է, թե՞ անմեղ:

Գասպարն արթնացավ, բայց զանգը դեռ հնչում է: Նա ոտքերով շոշափելով գտավ իր հողաթափերը, մարզանքին նմանվող մի քանի շարժում արեց և կիսաբաց աչքերով քայլերն ուղղեց դեպի լողասենյակ, հետո՝ դեպի խոհանոց: Վառեց զագոջախը, վրան դրեց թեյնիկը և մինչ եռալը սկսեց նախաճաշ պատրաստել: Ձոլավոր գիշերանոցը հագին այս ավտոմատացված գործողությունն արդեն երեսուր տարի է, ինչ կատարում է Գասպարը: Այդ գիշերանոցը նրան նվիրել են իր իրավաբան գործընկերները՝ կատակելու մտքով, բայց Գասպարը

կատակը չէր հասկացել և լուրջ էր ընդունել ու շնորհակալություն հայտնել:

Թեյնիկը արդեն ուր որ է կենա, այդ ժամանակ խոհանոց մտավ Գասպարը: Նա արդեն լուրջանք է ընդունել, կոստյումով և փողկապով անթերի տեսք ունի: Բնավորությամբ Գասպարը պահպանողական է, նա չի սիրում նոր իրեր գնել, և այդ պատճառով էլ նրան գործընկերներից շատերը ճանաչում են իր հագուստով: Ինչու նոր հագուստ գնել, եթե հինը կարելի է դեռ հագնել:

Սափրված, կոկիկ հագնված, գեր, սպիտակ մազերով ծերուկը նստեց նախաճաշելու՝ այսպես վաղ վերջին անգամ, վերջին անգամ: Այո, վերջին անգամ, քանի որ այսօր Գասպարի թոշակի գնալու օրն է: Նա մի քիչ մտամոլոր է, մի՞թե սա վերջն է, հետո ի՞նչ է լինելու, - դատավոր Գասպարը ինքն իրեն տալիս է այս հարցը, բայց պատասխան դեռևս չկա:

Նա նախաճաշեց, հավաքեց սեղանը, դրեց այդ ամենը վացարանի մեջ և ուղղվեց դեպի դուռը: Մի անգամ ևս հայելու մեջ հայացք գցելով՝ դուրս եկավ տնից: Աստիճանների վրա նրան հանդիպեցին հարևանները:

- Բարի լույս, Գասպար:
- Տրամադրությունդ ինչպե՞ս է, Գասպար:

- Այսօր լավ եղանակ է, Գասպար:

Այդ ամենին նա ուղղակի պատասխանում է զլխի թեթև շարժումով: Նա միշտ իրենից տարածության վրա է պահում ծանոթների: Ոչ մեկի հետ ջերմ հարևանական հարաբերություններ չունի, և դա չի վերաբերում միայն հարևաններին: Պաշտոնը թույլ չի տալիս. իսկ եթե հանկարծ նրանցից մեկը անօրինական բան անի, և գործը իր մոտ հայտնվի, այդ ժամանակ ինչպե՞ս դատի: Չգտնուներին ազատություն տալ ոչ մի դեպքում չի կարելի: Նա իր գործի նվիրյալն է և անբիծ համբավ ունի: Այո, դա գովելի է, բայց նա ընկերներ չունի, հարևանների հետ լավ հարաբերությունների մեջ չէ, իսկ ամենակարևորը՝ ընտանիք չունի:

Կար ժամանակ, երբ Գասպարը երիտասարդ էր, նա մի աղջկա հետ էր հանդիպում: Նրանք միմյանց սիրում էին և մտադիր էին ամուսնանալ: Բայց մի անգամ աղջիկը իր սիրեցյալ Գասպարին խնդրեց օգնել եղբորը՝ դատարանում: Գասպարը այդ խնդրանքը համարեց վիրավորական և կտրուկ մերժեց, մերժեց ոչ միայն խնդրանքը, այլև այդ աղջկանից էլ հրաժարվեց: Այդ դեպքից հետո Գասպարը կամանց կասկածանքով էր վերաբերում: Գասպարի մոտ բարոյաբան առաջացավ. նրան թվում էր, թե բոլոր կանայք նրանից ինչ-որ բան են ուզում:

Գասպարը դատարանի շենքից հեռու չի ապրում, այդ պատճառով ամեն առավոտ ոտքով է անցնում այդ տարածությունը: Ճանապարհին նա անցնում է առևտրային տաղավարների կողքով: Բոլոր առևտրականները նրան լավ ճանաչում են, ոմանք հարգալից բարևում են, ոմանք էլ նրա չափազանց արդար դատավճիռներից իրենց հոգիներում դեռ վիրավորանք են պահում: Սիս և նա, գրեթե հասնում է տեղ: Գրասարակում դատարանի շենքի դիմաց, մի մեծ օդապարիկ կա: Նրան այդ օդապարիկը շատ հետաքրքրեց: Դեռ մի քիչ ժամանակ կա, կարելի է մոտենալ, և նա մոտեցավ: Գնալու ցույցերը օդապարիկ է: Որոշակի գունարի դիմաց օդապարիկը երկինք է բարձրանում, իսկ վերևից կարելի է դիտել ողջ քաղաքն իր գեղեցկությամբ:

«Շատ հետաքրքիր է, - մտածեց Գասպարը, - բայց ժամանակ շատ չկա, գնալ է պետք, շուտով դատական նիստի ժամն է, իսկ գործը դեռ ուսումնասիրված չէ»:

Նա գնաց՝ մերթ ընդ մերթ հետ նայելով. շատ գեղեցիկ է այդ ամենը: Նա գերվեց այն մտքով, թե ինչպես ամեն ինչ կերևա վերևից, հատկապես դատարանի շենքը: Նա գնալով ավելի շատ է հեռանում օդապարիկից, բայց մտովի դեռ նրա հետ է: Դատից հետո անպայման կրկին կմոտենամ, անպայման կմոտենամ, - մտածեց Գասպարը և մտավ դատարանի շենք:

Դատարանում շատ մարդ կա, նա, ոչ ոքի չնկատելով, առաջանում է, բացում իր աշխատասենյակի դուռը և մտնում ներս: Մի մտայն սենյակ, ամբողջովին մոխրագույն, որտեղ կյանքի գույները լրիվ բացակայում են: Նա մոտենում է սեղանին, որի վրա դրված է դատական գործը: Նստելով սկսում է կարդալ: Նա շատ ուշադիր է, ջանում է բաց չթողնել ոչ մի բան, չէ՞ որ դրանից մարդկային ճակատագիր է կախված: Սակայն չի կարող լիովին ուշադրությունը կենտրոնացնել գործի վրա, նրան ինչ-որ բան խանգարում է, նա կարդում է, բայց նրա մտքում միայն մի բան է՝ օդապարիկը: Գասպարի հետ միտքը լուսավորվելու պես ինչ-որ բան է կատարվում: Նրան ավելի շատ օդ է պետք, նա խեղդվում է: Քանդում է վերնաշապիկի կոճակը, թուլացնում վզին պինդ կապած փողկապը, ջուր է լցնում և խմում: Նա ուզում է դուրս վազել դատարանի շենքից, գցել իրեն օդապարիկի զամբյուղի մեջ, կտրել բոլոր պարանոցներ և թռչել վեր: Մտովի պատկերացրեց այդ ամենը, բայց Գասպարը մեծ կամքի տեր է. կարողացավ ինքն իրեն վերադարձնել իրականություն, իսկ իրականությունը դատական

գործն է, որը դրված է իր առաջ: Նա նորից սկսեց կարդալ և երբ վերջացնում էր վերջին տողը, նրա աշխատասենյակ մտավ երիտասարդ, գեղեցիկ քարտուղարուհին:

- Պարոն դատավոր, դատական լսույնը սկսելու համար ամեն ինչ պատրաստ է:

- Այո, այո, մի քանի րոպեից ես կգամ:

Գասպարը փակեց դատական գործով թղթապանակը, կախիչից հանեց դատավորի թիկնոցը, հագավ, իրեն կարգի բերեց և գնաց: Դատարանի դահլիճում քարտուղարուհին ասաց.

- Ուրբի, դատարանն է գալիս: Մտնում է Գասպարը, նրան այս գործողությունը շատ է դուր գալիս, հատկապես, երբ ինքն է նստում, հետո միայն մնացածը:

Նա նստեց, վերցրեց դատական մուրճը. այդ մուրճը կարծես նրա ձեռքի շարունակությունն է, նրա էության մի մասնիկն է: Կտրելով կամ նրանից խլել մուրճը, նրա համար մահ է նշանակվում:

Գասպարը մուրճի հետ ծանոթացավ, երբ երկու տարեկան էր: Նա ծնվել է ապահովված ընտանիքում: Ծնողները կարող էին իրենց թույլ տալ գնել փոքրիկ Գասպարի համար շատ խաղալիքներ, բայց նա խաղալիքների հանդեպ առանձնակի հետաքրքրություն չուներ: Մի անգամ հայրը նրան նվիրեց փոքրիկ փայտյա մի մուրճ: Գասպարը սիրեց այդ մուրճը, ինչպես երբևիցե ոչինչ չէր սիրել: Այդ պահից սկսած մնացած խաղալիքները դարձան ատելի, և նա սկսեց այդ մուրճով ջարդել մնացած բոլոր խաղալիքները: Մուրճը նրանից խլելու ծնողների բոլոր ջանքերը իզուր անցան: Նա առանց դադարի լաց էր լինում պահանջելով վերադարձնել մուրճը: Գոգնելով երեխայի անդադր և անտանջելի լացից, ծնողները վերադարձնում էին մուրճը, որից հետո նա կտրուկ դադարում էր լաց լինելուց և շարունակում դրանով ջարդել իր մնացած խաղալիքները:

Փոքրիկ Գասպարի հայրը շատ էր խնամ, խաղաթղթերի և կանանց հանդեպ թուլություն ուներ, և վերջապես նա վատնեց իր ողջ ունեցվածքը: Երբ եկավ ժամանակը, և դատական կատարածությունները բռնագրավում էին տան գույքը, որոնց մեջ էին բնականաբար նաև խաղալիքները, Գասպարը ձեռքում պինդ պահել էր փոքրիկ փայտյա մուրճը: Նույնիսկ փորձառու կատարածություն չհաջողվեց խլել Գասպարի ձեռքից այդ մուրճը:

Դեռ այդ ժամանակ նա առաջին անգամ հասկացավ մուրճի ուժն ու հզորությունը, իսկ մեծամալուց և կրթություն ստանալուց հետո նա ընտրեց աշխարհի

հի ամենահզոր մուրճը և դարձավ դատավոր:

Այս անգամ ևս նա մուրճի մեկ հարվածով հայտարարեց.


- Դատական լսույնը հայտարարում են բացված:

Դեռ Գասպարը նորից մտովի տեղափոխվեց այլ տեղ: Նրա ցանկությունն այնքան ուժեղ է, որ այլևս անհնար է ինքնակառավարումը:

Նա չի լսում այլևս ոչ դատախազին, ոչ դատապաշտպանին, որոնք ինչ-որ բան էին պահանջում իրենից: Երբեմն Գասպարն այն աստիճան էր ընկնում երազանքների գիրկը, որ քնում էր դատական լսումի ժամանակ: Մեծակ դատախազի բարձր ձայնն էր նրան վերադարձնում իրականություն, բայց այն էլ՝ ոչ երկար ժամանակով: Նա նորից ընկնում է երազանքների մեջ. Գասպարն արդեն լրջորեն տարված է այդ մտքերով: Ինքնատիրապետում կորցնելով՝ նա առանց դատավճիռը հայտարարելու խփեց մուրճով: Դատարանի դահլիճում քար լռություն տիրեց: Ոչ ոք սիրտ չարեց անգամ մի բան արտաբերել: Բոլորը սպասում են, թե ինչ է ասելու դատավորը, բայց Գասպարը առանց որևէ բան ասելու վեր կացավ տեղից և ձեռքում պահելով մուրճը՝ վազեց: Նա, ինչպես վանդակից ազատված գազան, դուրս արձակ դատարանի շենքից: Նրա համար կարևորը միայն հասնել և օդապարիկի զամբյուղ մտնելն է:

Վազելու ընթացքում նա քանդում է վերնաշապիկի կոճակները, նա ազատ շնչել է ուզում և ազահորեն կուլ է տալիս օդը: Եվս մի քանի քայլ, և նա կհասնի իր նպատակին: Մտնելով զամբյուղի մեջ՝ նա սկսեց արագ քանդել պարանոցներ. առաջինը, երկրորդը, գտավ երրորդը և ակահ վերջինը, բայց այդ պահին օդապարիկին հետևող տղամարդը բռնեց չորրորդ պարանոց և պինդ պահեց: Նա հասկացավ Գասպարի միտքը: Գասպարը փորձեց ազատվել նրանից, բայց անօգուտ: Տղամարդը ֆիզիկապես Գասպարից ուժեղ է, բայց ուժեղ չէ նրա մուրճից: Նա մուրճը թափահարեց և ինչքան ուժ ուներ, հարվածեց այդ մարդու ճակատին: Տղամարդն ընկավ և ձեռքից բաց թողեց պարանոցը: Որտեղից՞ կարող էր այդ հասարակ մարդն իմանալ դատական մուրճի ողջ ուժի ու հզորության մասին: Օդապարիկը դանդաղ, ճոճվելով բարձրանում է: Գասպարի դեմքին ժպիտ հայտնվեց, նա սկսեց անբնական ժպտալ, հետո ծիծաղել, սպախորդ շունչ քաշելով՝ շատ բարձր, որպեսզի բոլորը լսեն, իր վերջի դատավճիռը տալով ինքն իրեն գոռաց.

- Ամեն՞դ է, ազա՞տ ե...



Վիտո Քոչչարի

ԲԺՇԿԻ ՄՈՏ

Գնացի բժշկի մոտ՝ կես տարին մեկ կատարվող ստուգման համար. քառասունս լրանալուց հետո դա մի տեսակ սովորություն էր դարձել արդեն: Բժիշկը վաղեմի ընկերս է՝ Կարլո Տրատորին, որն արդեն գիտեր ինձ «տակից վրա», ինչպես ասում են:

Մի փոփոխական ու ամպամած աշնանային հետմիջոց է, քիչ անց մութ ընկնելու է: Նոր են մերս մտել, ու Տրատորին ինձ է նայում մի տեսակ ու ժպտում է.

- Դոյակապ տեսք ունես, մեր տղա, անճանաչելի ես դարձել,

եթե հիշենք մի երկու տարի առաջվա լարված տեսքը:

- Իսկապես, չեմ հիշում, որ երբևէ այսպես լավ զգացած լինեմ ինձ, ինչպես հիմա: Սովորաբար գալիս են բժշկի մոտ, երբ վատ են զգում: Այսօր եկել եմ, քանզի լավ, շատ լավ եմ զգում ինձ:

Ու մի նոր բավարարվածություն եմ զգում, գրեթե վրեժխնդրական Տրատորիի առջև, որն ինձ մշտապես համարել է նյարդային, խռովահույզ անձնավորություն եմբակա է դարիս հիմնական տագնապներին: Այլևս չի պատահում մեզս թափանցեն ինքնասպանության մտքեր:

- Թեզ քննեմ, որ ի՞նչ ասում է Տրատորին: - Դեմքիցդ առողջությունը կաթում է, այս անգամ անտեղի պիտի փող ծախսես:

- Դե, քանի որ եկել եմ...

Դանում են շորերս, պառկում բազմոցին, նա չափում է ճնշումս, լսում սիրտս ու թոքերս, ստուգում ռեֆլեքսներս: Չի խոսում:

- Դե՞, - հարցնում եմ:

Տրատորին թոթվում է ուսերը, չի էլ բարեհաճում պատասխանել: Սակայն ինձ է նայում ուշադրությամբ, ասես լավ չի հիշում դեմքս: Ի վերջո.

- Ավելի շուտ, ասա՛՛ ինձ քնա-

հաճույքների դասին, դասական քննադատությունները: Մղձավանջները: Սևեռուն մտքերը: Երբևէ չեմ տեսել քեզնից ավելի տանջված մեկին: Ու բնավ չասես, թե...

Կտրուկ շարժում եմ անում: -Բացարձակ: Գիտե՞ս ինչ ասել է ոչինչ: Անգամ չեմ էլ հիշում: Կարծես լրիվ ուրիշ մարդ դարձած լինեմ:

-Լը-րիվ ու-րիշ մարդ...- արձագանքում է Տրատորին՝ մտածկոտ վանկարկելով:

Դրսում մշուշը թանձրանում է : Չմայած դեռ ժամը հինգը չկա, մութն սկսում է ընկնել:

-Յիշում ե՞ս,-ասում եմ,- երբ գիշերվա մեկին, երկուսին գալիս էի քեզ մոտ՝ վիճակիցս գանգատվելու:

-Դու լսում էիր ինձ, եթե անգամ քնատությունից ոտքի վրա չէիր կանգնում: Ամաչում եմ այդ մասին հիշելիս: Ի՞նչ ասուլիս եմ եղել, միայն հիմա եմ հասկանում, թե ինչ տոկոսային ասուլիս մեկն էի:

-Յիշում ե՞ս, ի՞նչ իմանաս:

-Ի՞նչ ես ուզում ասել:

-Ոչինչ: Ավելի շուտ, անկեղծորեն պատասխանիր՝ հիմա ես երջանիկ, թե՞ նախկինում:

-Երջանիկ: Ինչպիսի՞ ճոռոմ բառ:

-Դե, ասե՞նք, բավարարված, գոհ, հանգիստ:

-Իհարկե, շատ ավելի հանգիստ եմ հիմա:

-Միշտ ասում էիր, որ ընտանիքում, աշխատավայրում, մարդկանց միջև քեզ հաճախ մեկուսացված էիր զգում, օտարված: Եվ ուրեմն, քո այդ օտարվածությունը վերջացա՞վ այլևս:

-Յե՛նց այդպես: Առաջին անգամ է, որ... ինչպե՞ս ասեմ... հա՛, ինձ վերջապես ներգրավված եմ զգում հասարակության մեջ:

-Վա՛հ, շնորհավորում եմ: Ու այդտեղից էլ՝ անվտանգության զգացումդ, ճի՞շտ է: Խիղճդ էլ հանգի՛ստ, հանգի՛ստ:

-Ծաղրո՞ւմ ես ինձ:

-Բնա՛վ: -Ասա՛ ինձ՝ ավելի կանոնակարգված կյանք ես վարո՞ւմ, քան նախկինում:

-Չգիտեմ... թերևս:

-Յեռուստացույց մայր՞ւմ ես:

-Դե, գրեթե ամեն իրիկում: Իրման ու ես համարյա տոնից դուրս չենք գալիս:

-Յետաքրքրվում ես սպորտո՞վ:

-Պիտի ծիծաղես, եթե ասեմ, որ երկրպագու եմ դարձել:

-Եվ ո՞ր թիմի երկրպագու ես:

-Ինտերի, բնականաբար:

-Իսկ ո՞ր կուսակցությունից ես:

-Կուսակցությունից՞:

Վեր եմ կենում, մոտենում եմ նրան, նրա ակամջին մի բառ եմ շշուշում:

Նա թե՛

-Բայց ինչո՞ւ այդպես թաքում: Ասես դա հայտնի չլինի բոլորին:

-Ինչո՞ւ: Դա քեզ վրդովեցնո՞ւմ է:

-Ի սեր Աստոծ: Դա արդեն բնականոն բառ է քաղաքաբնակների շրջանում: Իսկ... ավտոմեքենա՞: -Ես էլ առաջվանը չեմ: Գիտես, որ մի ժամանակ խիստ ճիգ դանդաղ կոտորեցիք էի վարում մեքենան: Արդ, անցյալ շաբաթ, Յոնից Միլան հասա չորս ու կես ժամում: Ըստ ժամանակաչափի... Բայց կարո՞ղ եմ իմանալ, թե ինչի համար է այս ամբողջ հարցաքննությունը:

Տրատորին համում է ակնոցը: Արմունկները հենած գրասեղանի վրա՝ իրար է միացնում ձեռքերի մատները:

-Ուզո՞ւմ ես իմանալ, թե ինչ է պատահել քեզ :

Ես մայրս եմ նրան՝ հանկարծակիի եկած:

-Շատ հասարակ մի բան: Դու մեռած ես:

Տրատորին հենց այնպես կատակ չի անի, մանավանդ իր բժշկական կարիքներում:

-Մեռած,-կմկմացի ես,-ինչպե՞ս թե մեռած: Անբուժելի հիանդություն՞ում ունեմ:

-Դե չէ՛, ի՞նչ հիվանդություն: Ես չասացի, թե դու պետք է մեռնես: Միայն ասացի՝ մեռած ես:

-Այ՛ քեզ բան: Բա քիչ առաջ ասում էիր, թե առողջության մարմնացում ե՞մ:

-Առողջը առողջ ես...Լրիվ առողջ: Սակայն մեռած ես: Դու հարմարվել ես, ընդգրկվել ես, միակերպվել ես և հոգով ու մարմնով ներառվել հանրության կազմի մեջ, ձեռք ես բերել հավասարակշռություն, հանգստություն, անվտանգություն: Եվ... դիակ ես այլևս:

-Ա՛, էլի լավ է: Ուրեմն, այլաբանական իմաստով: -Ես էլ վախեցա, թե...

-Այնքան էլ այլաբանություն չէ: Ֆիզիկական մահը հավիտենական երևույթ է և ի վերջո գերազանցապես ճապաղ մի բան: Սակայն գոյություն ունի մեկ ուրիշ մահ, որը երբեմն ավելի վատ է. երբ անձնավորությունը տեղի է տալիս, վարժվում նմանակելուն, անվերապահորեն պարտվում շրջապատին, հրա-

ժարվում ինքն իրենից... Սակայն, մայրի շուրջը: Խոսիր մարդկանց հետ: Մի՞թե չես նկատում, որ նրանց ամենաքիչը վաթսուև տոկոսը մեռած է:

Ու տարեցտարի նրանց թիվն աճում է: Մարած, վարժեցված, ստրկացված: Բոլորը ցանկանում են նույն բաները, խոսում բոլորի նման, մտածում նույն բաների մասին: Այդ գարշելի գանգաժան մշակո՞ւյթը:

-Է՛՛, խոսում ես, էլի: Յիշում եմ, երբ անցյալի մղձավանջներն այլևս չունեմ, ինձ շատ ավելի առույգ եմ զգում: Շատ ավելի առույգ, երբ դիտում եմ ֆուտբոլային մի հոյակապ հանդիպում, կամ երբ ոտքով սեղմում եմ արագացուցիչը ինչ-քան մեջ ուժ կա:

-Իմ խեղճ Ենրիկո: Օրինյալ եմ քո երբեմնի անձկությունները:

-Դե լավ, բավական է:

Տրատորին հաջողվեց իսկապես ինձ նյարդայնացնել:

-Ուրեմն, եթե մեռած եմ, ինչպե՞ս կբացատրես, որ այս վերջին տարին ավելի շատ քանդակներ եմ վաճառել, քան նախորդ տարին: Եթե հանձնված լինեի, ինչպես դու ես ասում...

-Հանձնված չէ... մեռած: Այսօր ամբողջ ազգեր կան, որոնք լրիվ մեռածներից եմ բաղկացած:

Յարյուր միլիոնավոր դիակներ... Նրանք աշխատում են, կառուցում, հայտնագործում, սոսկալիորեն չարչարվում են և երջանիկ են ու գոհ: Եվ սակայն, թշվառ մեռածներ են: Ի բացառություն մանրադիտակային մի փոքրամասնության, որը նրանց անել է տալիս այն, ինչ ինքն է ու-

զում, սիրել տալիս այն, ինչ ինքն է ուզում, հավատալ տալիս այն բանին, ինչ ինքն է ուզում, ինչպես Անտիլյան կղզիների գոմբիները, դիակները, որոնց կենդանացրել են կախարհներն ու ուղարկել աշխատելու դաշտերում:

Ինչ վերաբերում է քանդակներին, հենց հաջողությունը, որ քեզ ուղեկցում է հիմա, և որը չկար մի ժամանակ, ապացուցում է, որ դու մեռած ես:

-Դու հարմարվել ես, հրաժարվել ես, վերակերպվել ես, քեզ ստիպել ես քայլել բոլորին հանդիմանաբար, փշերդ կոտրել ես, դրոշներդ խոնարհել, հրաժարվել ես խեղճի, խաղաղարարի, խաբվածի դերերից: Ուստի և դուր ես գալիս մեռյալների լայն հասարակությանը:

Ոտքի եմ թռչում: Այլևս չեմ կարողանում դիմադրել:

-Իսկ դո՞ւ, - հարցնում եմ նրան կատաղած,-հապա մի քեզնից խոսիր:

-Ե՞ս,-տարուբերում է գլուխը,- ես նույնպես, բնականաբար, մեռած եմ: Արդեն երկար տարիներ ի վեր: Ո՞նց դիմադրես այնպիսի քաղաքում, որ սա է : Ես նույնպես դիակ եմ: Միայն թե ինձ մի ճեղք է մնացել, գուցե մասնագիտության բերումով: Մի ճեղք, որտեղից ինձ հաջողվում է դեռևս տեսնել:

Արդեն իսկապես գիշեր էր: Եվ արդյունաբերական թունամշուշը կապարի գույն ուներ: Լուսամուտի ապակիներից անդին դիմացի շենքը հազիվ էր մշմարվում:

Թարգմանությունը իտալերենից Գառնիկ ՄԵԼՔՆՅԱՆԻ



Լևոն ԲեժՄՆՅԱՆ

Մեջս կկվի բներ՝ Յազար հոգու սրտում, Յազար հոգու սրտում Բուն եմ դրել, Յազար հոգու սրտից Կկվի նման թռել, Ո՛ր եմ թևել բախտից, Ո՛ր եմ չվել:

Մեջս հազար տարվա Քանդած պաշտոններ, (Դեռ խմում եմ, Աբո, Իմ հարազատ ընկեր), Մեջս կարկուտ ցրող, Մեջս փշուր փշեր, Քանդողների մեջ եմ երազներս քշել:

Յիմա քանի՞ կողից Պիտի եվա շինեմ, Քանի՞ կողմից բռնեմ Մենակության թևից, Որ հագնեմ էլի, Ինչպես հունիսաշ կավից Յագնեմ եմ հոգին Կավագործի...

Խաչատուր Աբովյանին

Աղջիկները՝ կանաչ գարի, Կանայք՝ ոսկե գարեջուր, Խմեմ, փռվեմ ոսկե արտին՝ Յողեմարմին ու փխուր:

Գարեջուրը՝ ոսկե գինի, Կանայք աղ եմ ու փրփուր, Շուռ գամ, պատմեմ Արարատին Ինչուները իմ տխուր:

Ազգավի պես պիտի թռչեմ Մեղքերի մեջ ծովական, Գնամ, կորչեմ Մասիս սարի Չյունների մեջ ու չգամ:

Եվ ցավերում անմարդկային, Չյունների մեջ մարդամոտ, Չյունների մեջ Մասիս սարի Գլուխ կտա մի անցորդ:

Գլուխ գլխի կտանք գավով, Իրար աչքից կխմենք, Սարի գլխից դեպի գարին Կբարակի երկու վերք:

Մեկը կիջնի՝ Յրագղանի Ջրերի մեջ հովանա, Մյուսը՝ Գյունրու փողոցների Սև քարերը վլանա:

Ու կմնան երկու անցորդ, Երկու գարուն, երկու եռք, Մասիսական հույսից կառչող Արձակագիր ու պոետ:

Երկնեց երկիրը՝ ուռուցք, Երկինքը ցավերով երկնեց, Մի Պոետ պոետի պտղունց Ես անհամ շիլային խառնեց:

Ես անհամ շիլայի վրա Յուղացան արև ու որոտ, Չկերանք, չկերանք - սառեց,

Չիմացավ կույս համը ոչ ոք:

Մնացինք, մնացինք, Չարե՛նց, Խելազար ամբոխին կարոտ, Խելահաս ամբոխը գուցե էլ չունի՞ արևին բողբոջ:

Երկնեց երկիրը՝ ուռուցք, Երկինքը ցավերով երկնեց, Մի Պոետ պոետի պտղունց Ես անհամ շիլային խառնեց:

Կինը աչքեր ունի՝ լուսամուտ եմ ծակում, Աչքեր՝ օդամղիչ ատրճանակ, Յայացքները արձիճ գրպանում է պահում, Եվ գետեր եմ հորդում կոպերի տակ:

Կինը հանցանք ունի Աղամի դեմ, Լիլիթական կրակ ու մահամա, Ու թե կինը պիտի դառնա չարին հարեմ, Ես կլինեմ պոետ ու սատանա:

Սիրո մեջ փաթաթվեմ՝ ճչաս, Սիրո մեջ լողանաս՝ տեսնեմ, Գետանամ, վարարվեմ, խաղաս Մեղավոր կրակով գեհեն:

Սիրո մեջ լողանաս՝ տեսնեմ, Ջրերի աչքերով կաթոց, Դառնամ երկարող էստե, Գլորվեմ սարերից փողոց:

Գետանամ, վարարվեմ, խաղաս «Փոթորիկ ծովի երեսին», Յունական կրակ ու պառնաս, Մուսաներ, փարատե՛ք Ձևսին:

Մեղավոր կրակով գեհեն

Սիրո մեջ փաթաթվեմ՝ ճչաս, Դու դաղես, ցավածդ դեղեմ՝ Աչքերիս արցունքը չլաս...

Անգույն-ճերմակ փաթիլ, Տավար սնող դաշտեր, Թրջած հողի տակից Ելան կարմիր վարդեր:

Ելան, հասան, մինչև «Ախ» բղավեց տղան, Մտող տարավ համին, Յամը արեց հարամ:

«Կարմիր շուրթով տղա»... Չայն կրակեց հեռվից, Կարմիր աղջիկ շուրթով Սիրտը հանեց գրկից:

Անգույն-ճերմակ կաթիլ, Աչքով անվող դաշտեր, Թրջած հողի տակից Ինչո՞ւ էլան վարդեր:

Իմ հայրենիք, իմ մեծ, Իմ եռագույն սալյուտ, Ոչ մի կեսդ է կարմիր, Բաժան-բաժան մտքով Յայանման մի կույտ Քո ձեռքերը կապեց Քո ձեռքերով...

Գլխովդ անցավ կարմիր, Գլխիդ փլվեց կապույտ, Եվ դրոշիդ բեկվեց Նարնջագույն ձևույթ: Ինձնից բաժան իմ սեր, Չկրակված բարոյք, Ոչ մի կեսդ է կարմիր, Ոչ մյուս կեսդ է կապույտ: Ի՞նչ է մնում միայն-Դաշտից պոկած թեյ-ուրց, Ոտնամաններ անհագ, Աներիվար պախուրց:

Ի՞նչ է մնում միայն-Կուսագրկված մի պուտ, Ուր գրված է «բարի», Ուր գրված է «զալուստ»:

Մեզ մնում է միայն Անլուսակիր մի մութ, Գարեջրված թմբիր, Եվ զլխի տակ՝ շան բուրդ... Ինձնից բաժան իմ սեր, Ծիրանագույն խարույկ, Իմ հայրենիք, իմ մեծ, Իմ եռագույն սալյուտ...

Իմ աչքերը բորբոսնել են, Բորբոսներ են դեղնուցները աչքերիս, Քո աչքերի լուսացույցը կանաչել է, Դեմ չե՞ս լինի, Եթե անցնեմ քո մոտից:

Իմ աչքերը բորբոսնել են, Բորբոսներ են դեղնուցները աչքերիս, Քո այտերի լուսացույցը ամաչել է, Չեմ հասկանում Յամրահամեմ քո խաղից:

Իմ աչքերը բորբոսնել են, Բորբոսներ են դեղնուցները աչքերիս, Քո անունը հարցուփորձով իմացել եմ, Ել ինչ ասեմ, Պոծում չունես ինձանից:

Իմ աչքերը բորբոսնել են, Բորբոսներ են քո աչքերը, սիրե-լիս, Աչքերը իմ, աչքերը քո հանդիպել եմ. Երկու աստղ Յանդիպել եմ ընկնելիս...

ԵՎ ՆՇԱՆԱԲԱՌՆ Է՝ ԱՊՐԵԼՈՒԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ



պարի բոլոր ատրիբուտները: Նրան ես անցկացնում եմ իմ գրական պրիզմայով: Իսկ նկարչության համոզեալ իմ պաշտամունքը ձևավորում է կերպարի հանդերձանքն ու ընդգծում հոգեկերտվածքը:

Ս.Ա.- Ի՞նչ զգացիր, երբ ավարտեցիր առաջին պատմվածքը: Ինչպիսի՞ն էր ընթերցողիդ արձագանքը:

Շ.Շ.- Առաջին պատմվածքս և արձագանքը չեմ հիշում, ճիշտն ասած, բայց բանաստեղծությունս հիշում եմ, որ միմիայն ինձ համար էի գրել...

Ս. Ա. - Եթե խնդրեմք ես և ընթերցողները չէ՞ս բարձրաձայնի...

Շ. Շ. - Կփորձեմ...

Սոնա Անտոնյան- Այնպես ինչպես գրում ես՝ դու կարող էի՞ր նկարել կտավի վրա. կերպարներիդ գծերը, նրանց բնավորությունների գունաշերտերը պատկերել:

Շնորհիկ Շահինյան- Ես նկարչությունը պաշտում եմ, սակայն այդ պաշտամունքը դեռ մանկուց ներարկվել է գիր ու գրականության մեջ, իսկ ավելի ուշ սցենարներում: Դեռ դպրոցական տարիներից սիրում էի փոքրիկ բեմադրություններ կազմակերպել և թաղի դպրոցականների մասնակցությամբ «թատրոն խաղալ», այսինքն՝ իմ երազանքի իրականացման ճանապարհին արված առաջին քայլերն էին: Հետագայում ինքս էի հորինում փոքրիկ պիեսներ, իսկ դպրոցում՝ թատերական խմբում ավելի տեսանելի դարձան իմ նկարումները: Իմ գրականությունը կինոաչք է, որն ինձ տեսանելի է դարձնում կեր-

Ս.Ա.- Մաքուր ապրում է բխեցնող կայծեր են, կասեի: Այդ կայծերը դեռ շարունակվում են բռնկվել քո գրական կյանքում՝ ստեղծելով նոր պատմվածքներ՝ նոր հերոսներով ու յուրօրինակ ճակատագրերով:

Շ. Շ. - Այդպես է ճիշտ և ճիշտ... Իսկ առաջին լուրջ պատմվածքս «Իրիսն» էր, որը լույս տեսավ 1993թ. Գյումրիում հրատարակվող «Ծովասար» թերթում (խմբագիր՝ Էդիկ Դավթյան):

Պատմվածքը, տատիս տեսլականի պատկերով, ձևավորեց գեղանկարիչ Աս Կարոն (Ասատրյան Կարո): Այնքան հոգեհարազատ դիմանկար ստացվեց, որ Հայրենական պատերազմի ավարտի օրը հոգին ավանդած Սաթեն տատիկիս համար որպես մի թանկ հուշ-նկարի խորհրդանիշ դարձավ: Արձագանքն, անշուշտ, ոգևորիչ էր: Պատմվածքն ընդունվեց և սիրվեց իմ գրչակից ընկերների կողմից իբրև լավագույններից մեկը՝ այժմ և միշտ:

Ս. Ա. - Տեսե՞լ ես երազներ, որոնց կերպարները կամ սյուժեն պատմվածքի նյութ են դարձել հետագայում:

Շ. Շ. - Տեսել եմ: Ես դաշնակահար ընկերուհի ունեի... Երկրաշարժից առաջ էր: Նրա զույգ որդիներն այդ սարսափելի աղետին զոհ դարձան. մնացին դպրոցի փլատակների տակ: Որդեկորույս մոր հետ իմ շփումները շարունակվեցին... և մի օր ես երազում տեսա, թե ինչպես է նա վազում

ծաղկառատ մարգագետնով և դիմավորում իր տղաներին: Հետո արևից ոսկե փոշի մաղվեց, և նրանք՝ վեր բարձրանալով, հետզհետե հեռանալով դարձան ճերմակ ամպի քուլաներ: Այդ երազը իմ «Եկվորը» պատմվածքի սյուժեն դարձավ, որն ընդգրկվել է հանրային ռադիոյի Հայ և համաշխարհային գրականության ոսկե ֆոնդում:

Ս. Ա. - Եթե կարողանայիր մեկ բան փոխել քո անցյալում, ո՞րը կլիներ...

Շ.Շ.- Ժամանակը... երկրաշարժի վայրկյանները, բազում կորուստներս հետ կբերեի... Այդ ժամանակները կդարձնեի միմիայն ապրելու ժամանակներ:

Ս. Ա. - Ինչի՞ն ես անվերապահորեն հավատում:

Շ. Շ. - Աստծո գոյությանը և դրախտի հրաշքներին: Վստահ եմ, որ այնտեղ դրախտում կհանդիպեմ բոլոր այն մարդկանց, ովքեր ինձ հետ ապրել են այս կյանքում և սպասում են ինձ:

Ս.Ա.- Արձակագիր Շնորհիկ Շահինյանի հետ մեր գրույցը էքսպրոմտի նման ստացվեց՝ անբռնազոս ու սրընթաց: Մեկ հարց այնուամենայնիվ պահել էի մտքիս թաքստոցում. այն մեր գրույցի տրամաբանական ավարտը դարձավ:



«Քո կյանքում, քո կողքին միշտ եղել է հավատարիմ մեկը, որ թե՛ ընկեր էր, թե՛ զինակից, թե՛ բննադատ, թե՛ խորհրդատու՝ կողակիցդ՝ բանաստեղծ Արա Արթյանը... Ի՞նչ ես զգում, ի՞նչ կցանկանայիր... հղել տիեզերքին ի լուր: Այս մասին պիտի հարցնեի...

Շ.Շ.-Դու գրողին հատուկ ներքնատեսությամբ լրացրիր բաց թողնված տեքստը. պատասխանեցիր իմ չբարձրաձայնած հարցին, խոսեցիր հավատի ու սպասումի մասին, հիրավի, դա այն խտացյալ ապրումն է, որը քեզ ուժ է տալիս ստեղծելու և այն մեծ նվիրումը, որ եղել է և կա՝ նրա հետ և նրանից հետո:

Հ.Գ. Մեր թիկունքում գորել սերունդ է կանգնած և վաղվա օրը ստեղծարար է լինելու:

Հարցազրույցը վարեց Սոնա ԱՆՏՈՆՅԱՆ

Վերջերս Բագրատ արքայապետի Գալստատյանի «ԱՎԵՏՅԱՆ ԵՐԿՐԻ ՏԵՍԻԼՔՈՎԵ» գրքի 4-րդ պատմելային քննարկում-շնորհանդեսը տեղի ունեցավ Գյումրու գեղագիտության ազգային կենտրոնում: Գրքում բանալիներն են տրվում վերադառնալու հայության իսկատիպ նկարագրին: Միայն այդ միջոցով է հնարավոր կառուցել մեր Ավետյաց երկիրը, որը բոլորիս երազանքն ու ձգտումն է: Ավետյաց երկիրը մեր բոլոր իղծերի, մեր ձգտումների, երջանկության և անսպառ ուրախության երկիրն է, որը կառուցելու ճանապարհի մեջ կոչված է լինել յուրաքանչյուր հայ՝ որպես առանձին անձ, և որպես հավաքականություն՝ ազգ, ժողո-

վորդ: Ինչպես ասում է Բագրատ Սրբազանը. «Միզուցե մեզանից շատերը չտեսնեն Ավետյաց երկիրը, բայց մենք կոչված ենք այդ տեսիլքով ապրելու և կառուցելու մեր Ավետյաց երկիրը»:

ՎԱՍՆ ՈԳԵՆԵՄԱՆ

Արդի աշխարհում պատերազմներն ու արհավիրքները մետազտագներ են տալիս: Եվ արվեստն ու գրականությունը, ուղենշային հրապարակախոսությունն ու խոհագրություն-գրույցները հոգևոր դիմադրություն են չարին ու նրա բերած աղետին:

Աշխարհն, այո՛, փոխում է իր մաշկը, և մենք մաշկապուրծի հռչոցով ենք գնում գոյաբանական հարցերի լուծման: Այս համապատկերում ծնվում են գրքեր, որոնք իրենց կենսական ու հրատապ հարցադրումներով, հիմնախնդիրների լուծման բանալիով մշտապես ընթերցելու կարիք ունենք: Այդ գրքերի հարցադրումները օրայնորի չեն, այլ գնում են դեպի օրերի խորք՝ անիծյալ ինչու-ներից բարձրացնելով մեզ դեպի որովհետև-ների իրականություն:


Քանի որ դրանք պոստեմգավորում են մեզ, մոտիվացնում, նորոգ մտքի ու գաղափարի վեկտորներ են տալիս՝ արժանապատիվ ապրելու նոր առաջարկներ անելով: Այդ գրքերը նախապատրաստում են մեզ վերագարթումի: Եվ ահա այսօր Ավետյաց երկրի տեսիլքով, իր փորձը-

կալմամբ ու հոգևոր փորձառության մեզ հետ է տեսիլքավոր Բագրատ սրբազանը: Սա յուրօրինակ իրողություն է ներկայիս մեջ ապագայի հետ... և դարձի ի շրջանս յուր: Անամոնակամի սթափեցնող խոստովանությամբ սրբազանը գրում է «Ես հավատում եմ հրաշքին, այն տեսիլքին, որ ի վերջո մեր ամոթի ու խայտառակության զգացումը զոնե ինչ-որ ձևով կցնցի մեզ և ինքներս մեզ հաղթելով կկարողանանք վերականգնել մեր նկարագիրն ու արժանապատվությունը»:

Ձիլ արթնության հուսո կոչնակ է զարնում արտաքին և ներքին թշնամյաց դեմ. «Այսօր հանրային դիմադրությունը տկար է: ...Մենք ընդարմացանք և չփորձեցինք մեզ շքեղացնել ու վերաարբարել: Մեր պարտությունը մեր մտքերի ու հոգիների մեջ է տեղի ունեցել: Քանի որ գիտենք յուրաքանչյուր ամրոց նախ և առաջ մտքով պիտի գրավեն»: Հետևաբար ուղղենք մեր մեջքը, իրավունք չունենք խխունջանալու: Սրբազանի բառընտրությունն անգամ շատ հաճախ վկայում է նրա հոգևոր խոսքի բովանդակային խորքը, գրույցից գրույց գրչանցումները սահուն են, բնական շեշտադրումով, ներանձնավորի բարձրաթիչ գրույցներ են սրանք, հանրային, ազգային կյանքի ներքին ուժականությունը հզորացնելու, հայի հոգեկարագիրն ու մտախառնվածքը ամեն գնով վերականգնելու ու

անխաթար պահելու մարտահրավեր: Սրանով հանդերձ ապագայի տեսիլքին մերձ սրբազանը դառը բնորոշում է տալիս մեր վիճակին. «Մենք մեղքին ենք պարտվել, հենց անտարբերության, անհոգության, անդիմազիծ, անհայրենիք մեղքին: Հուսահատությունն էլ է մեղք: Բայց սա վերջը չէ... Մեր պատմության ընթացքում միշտ հայտնվել են վճռական մեծակներ, որոնք կարողացել են բեկում մտցնել»: Սա թերևս հրաշքն է, որ սահմանային իրավիճակներում ի հայտ իր վեհությամբ որպես հայի գեներալ-կապիտան գինվոր:

Իմաստուն ասության բանաձևներ կամ կոնցեպտուալ գաղափարական ձևակերպումներ են հիշեցնում Բագրատ սրբազանի գրույցների վերնագրերը, որոնք բացահայտում են նրա մտահոգությունների ժիրը ու ասելիքի ենթաշերտերը, գործրինակ՝ Ծիծեռնակաբերդը ուժ է ստանում եռաբլուրից, Ջոհի ինքնությունից՝ հաղթողի ինքնություն: Տաճարը հաղթելու է փողոցին: Քրիստոնեությունը՝ որպես վերադարձ ինքնությանը: Այսօր մեր ընդվզումը դարձել է երկրից հեռանալը: Դա ինքնության կորուստ է: «Մոռացված ազգ» լինելու հայեցակարգով պետք է հասնենք «հաղթանակած ազգ» լինելու տեսիլքի իրականացման: Բազմախոս և բազմաթեմա ընդգրկումով սրբազանը մեզ բացառիկ պատգամ-դասեր է տալիս՝



զուգարաբար վկայաբերելով մեր նախնյաց, մեր մեծ հայրերի փորձն ու չարին դիմակայելու վճռականությունը: Գրքի գրեթե բոլոր գրույցներն առնչվում են Ավետյաց երկրի տեսիլքի իրականացմանն ու կենաց ծառի պահպանմանը: Աստված ասում է՝ Ավետյաց երկիրը նրանք կտեսնեն, ովքեր անցել են մաքրվելու խորհրդով և կարող են ստեղծել այն երջանիկ պետությունը, որին մարդկությունը ձգտում է:

Ընտրյալ դիրքապահ է Բագրատ սրբազանը մեր երազին ու տեսիլքին... Վկայաբերելով Գևորգ Ե Սուրենյաց հայրապետի բառերը որպես երդում. «Մենք մեր վերջին խոսքը դեռ չենք ասել անարգ թշնամուն, և այդ խոսքը պիտի լինի հաղթական»:

Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ



ԱՋՆԻԻ ԳԱՐԱԼԵՔԵԱՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ԴԱՐՉ

Տենչ մը անպատում Կ'անձրեւէ յար խոպան դաշտերու լռումին կուտակ: Ու կ'իջնեն սպիտակ ձիւնի փաթիլներ

Մանուկ օրերուս համբոյրին քնքուշ:

Կենեղ լոյսին հետ Մարգարտաշար դաշտերուն սերմերը բարի Յուսահատ կեանքիս զգջումը կու լան:

Ո՛չ մէկ տարակոյս վաղուան յարածուփ խիմղին:

Այս անձրեւը լոյս խոպան դաշտերու եւ զղջումը բարութ դարձի փառաւոր

Ձիւս ետ կը կանչեն Առօրեայ կեանքին հրճուանքին բիւր:



ԱՆԱՅԻՏ ՍԱՐԳԻՍԵԱՆ ՓԱՐԻՉ

ՔԱՐ ՈՒ ԲԱՌ

քար մը դուն քար մը ան բառ մը դուն բառ մը ան քարեր բառեր ցիր ու ցան

քով քովի եկաք սակայն չորս պատ ու պատմութիւն չհարձաք

քար մը դուն քար մը ան բառ մը դուն բառ մը ան քարեր բառեր քով քովի բայց ցիր ու ցան

յետ գրութիւն

ափիղ մէջը ընդամենը հինգ բառ կամ քար

հինգ բառերը կամ քարերը զգոյշ կը սփռեն ու լո՛ւռ կը զննեն

բառ մը կամ քար մը կ'ընտրես դէպի վեր կը նետես իսկ միւսները մէկիկ մէկիկ կը հաւաքես ու վեր նետած քարէ բառը ընտրած յաջորդաբար հաւաքած միւսներուն հետ ետ կը բռնես

հաւաքել՝ կը յաջողիս բռնել՝ կը ձախողիս կամ ալ հակառակը բայց կը շարունակես հաւաքել բռնել ձախողիլ յաջողիլ

կը կրկնես այս անգամ սփռուած բառերը կամ քարերը զոյգ զոյգ երեք եւ մէկ վերջապէս չորսը միասին կը հաւաքես ու վեր նետած քարէ բառը սիրելի յաջորդաբար հաւաքած միւսներուն հետ միշտ ետ կը բռնես

անվերջ կը շարունակես սփռել հաւաքել բռնել ձախողիլ յաջողիլ հինգ քարէ բառերով յետ գրութիւնը այս որ պարզապէս կը կոչուի կեանք



ԱՆՈՒՇ ՆԱԳՎԱՇԵԱՆ ԵՐՈՒՄԱՂԵՍ

ԵՒ ՔԱՐԵՐԸ ՍԵՐՍ ԼԱՅԻՆ

Այսօր անցայ նոյն ճամբայէն Որ միասին միշտ կ'անցնէինք, Քարերն անգամ հարցուցին քեզ, Բայց պատասխան չունէի ես...

Ինչպէս ըսեմ որ ալ չկաս, Որ ալ միանկ պիտի անցնիմ... Ինչպէս ըսեմ, որ ալ երբեք

Պիտի չանցնիմք մենք միասին...

Ի՞նչ արցունքով լամ քարերուն, Ի՞նչ սուտ արդեօք յօրինեմ ես... Որ մեր ճամբան մնայ նոյնը՝ Չքարանայ սիրտը քարին...

Բայց պատմեցի մեր ճամբային եւ քարերը սէրս լացին...

ԲԱՐԻ ԼՈՅՍ ՔԵՉ ՍԻՐՈՅ ԱՐԵՒ

Բարի լոյս քեզ սիրոյ արև, Դուն միշտ ժպտա հողոյս վերև, Սիրոյ լոյս է շուրջս բոլոր, Լոյս է սիրտս սիրոյ հուրով:

Լուսաւորէ ջահով սիրոյ, Սիրտերն սիրող և չսիրող, Չմթագնի երկնագոյնը՝ Թող միշտ շողայ սիրող սիրտը:

Բարի արև ո՞վ է սերդ, Որ դուն այսպէս պայծառ ես միշտ, Ո՞վ է արդեօք սրտիդ տէրը, Որ քեզ շողուն կը պահէ միշտ:

Վառէ՛, վառէ՛ սիրոյ արև, Վառէ՛ սիրոյ բարի հուրով, Բոցավառէ՛ աշխարհը ցուրտ՝ Սիրոյ անշէջ կրակներով...



ԱՐԱՍ ՔԵԹԵՆՃԵԱՆ

ԱՐՏԱԳԱՂՁ

Թողած հողը թանկագին, Ուր պապերդ կը հանգչին եւ արմատներդ են խորին՝ Գացիր հեռուն, օտարին:

Թողած օճախդ ջերմիկ եւ օրրանդ, ուր մայրիկ Օրօրներով քաղցըրիկ՝ Քեզ սնանեց իմ բալիկ:

Թողած ընկերք, ընտանիք, Անկեղծ սէրդ քնքուշիկ, Թողած յուշ ու յիշատակ՝ Այլոց դարձար մտերմիկ:

Թողած մարգերն հայրենի, Բուրումնաւետ ծաղիկներ եւ երփնաթոյր թռչուններ՝ Գաղթեցիր նոր աշխարհներ:

Թողած Մասիսն ալեհեր, Արագածը անվեհեր եւ գուլալ ջուրն Սեւանի՝ Թափառեցար մութ ափեր...

Թողած վանքեր ու գանձեր, Էջմիածին, խաչքարեր, Թանկ պատմութիւն, Սուրբ Տաճեր՝ Այլոց եղար անձնուէր:

Թողած խաղողն զմայլիչ,

Ընտիր գինին զգլխիչ, Դեղձ ու ծիրան մեղրահամ՝ Կեղծն զգացիր հրապուրիչ...

Թո՛ղ բարքերը խաբուսիկ, Կառչի՛ր հողիդ ի՛մ բալիկ, Եղի՛ր պաշտպանն ու ծառան՝ Հայաստանիդ անուշիկ...



ԱՐԹՈՒՆ ԿԵՊԵՆԼԻՕՂԼՈՒ

ԿՈՐԱՔԱՍԱԿ

Մտահոգ տեսայ այսօր քեզ Ուտերդ կախ Սրտիդ մէջ վախ եւ թողեր Քեզ են վերագրեր Չնչին մեղքերը Սլքստող անտէր

Քեզ են ընծայեր Առիթ մը գաղտնագողի Սիթ մոռացման կարօտ Բոլոր մեծ ոճիրներ

ԻՇԽԱՆԱԿԱՆ

Հորիզոնի վերջին շիկնանքի Հսկողութեան տակ քաղաքը Աջս՝ Մեծ կղզին եւ աջ աջի՝ ԻՇԽ ԱՆ ՆԵՐ

Հրդեհ մը կարծես Կանգ կ'առնէ մէկ կողմ Ու յանկարծ կը փորփոքուի անդին Ուր որ ես դեգերիմ

Տարօրինակ բան յոյս Քեզմէ պակսի անգամ կը գտնուի Մէջը ուրիշի մը մատեանին



ԳԵՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ

ՓՈՐՉԵՑԻ...

Փորձեցի քալել, կեանքի գեղեցկութեան ուղիներով, Մարդկային ընդհանրական յոյսերն կախուած, Լաւատեսութեան յամառ կամքով, Հաւատքի բոլոր բառերս օգտագործած: Բայց, ափսոս, քայլերս սառած մնացին:

Փորձեցի քալել մեծ ու փոքր քայ-

լերով, Ազգիս ապրումները շալկած, Անոր ներկան վաղուան պատրաստելով, Ներքին ու խոր ապրումներով պաշարուած: Բայց, ափսոս, քայլերս կէս ճամբան մնացին:

Դէմքիս վրայ յուսահատ մարդու արցունքով, Անփոշի մտածումներս խոհերու դարձուցած, Սիրտս ալ միտք դարձնելով, Փորձեցի քալել գրիչս աչքի վերածած: Բայց քայլերս իրենց տեղերը մնացին:

Փորձեցի քալել կարօտի արցունքով, Երկրէ երկիր իբրեւ գաղթական դարձած, Սրտիս մէջ կորսուածի մը կանչով, Հայրու յոյսն ու լոյսը փնտռելէ յոգնած: Բայց, ափսոս, քայլերս անաւարտ մնացին:

Քալեցի կեանքի հոսանքն քշուած, Եւ վարակիչ ապրումներու իբրեւ որսորդ, Օրերուս ուրախ եւ տխուր շարանով, Մտքի հոսքի դարձուցի տեսական ճամբորդ: Բայց, ափսոս, դարձեալ չյաջողեցայ:

Քալեցի յաղթանակի եւ պարտութեան հետ, Քայլերուս ծուռ հետքերը շալկած, Կեանքի սնանկութիւնը պոռաւով, Անմտօրէն կեանքի արդարութիւնը որոնած: Բայց, ափսոս, դարձեալ ձախողեցայ:

Շուրջս յառաջանքի աղմուկով, Քալեցի վարակիչ ապրումներն լքուած, Մոռացութեան եւ կարօտի ծայրով, Փորձեցի քալել կորսուածի կանչովս լեցուած: Բայց, ափսոս, դարձեալ չկարողացայ:

Կեանքիս հին ու նոր պղտորած հոսքերով, Ու տարակուսանքի նայուածքովս զինուած, Խաղաղութիւն աղերսող աչքերով, Ազգային բոլոր երազանքներով բռնաւորուած, Վերջապէս... որոշեցի չքալել, այլ միայն՝ սպասել...

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող՝ Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղը: Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62 Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ. հեռ. (094) 53 44 64 Խմբագրական խորհուրդ Գլխավոր խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլէրորադո Պրինտ» ՍՊԸ Տպագրված է «Վան Արյան» հրատարակչատան տպարանում Տպաքանակը՝ 500 Ծավալը՝ 2 տպագրական մամուլ